



4-30

ካሊፍኦርኒያ

ԿԵՅՍԵՐԵԿԸՆ ՀՈՎԸՆԸ ԵՒ ՈՐ ՈՒԹԵԼՄԵՐ:

M w z m u l w n e w l *N* w J h w h w n

ՃԵՄԵՐԵՆԻՆ

ԱՐԼԵԼԵԱՆ ԸՆԴՈՒՄ, ԿԱՌԱՆԳԵԼՈՅ Ի ՄՈՍԿՈՎ ՔԱՂԱՔԻ Ի ՏԵԱՐԳ

[illegible]

Ի Հայրապետուն Տեառն Տեառն ԵՓՐԵՄԵՅ
արժանընտիր Լստուածաբեալ Կաթօղիկոսի
ամենայն Հայրց և Լսպետի :

Յառաջորդում են Արատանի Հայոց Տեառն Դերեան սրբա-
ղան Բրքեպիսկոպոսի, Բաբեի և ծայրագոյն Կառավարչի հա-
ղևոր զործոյ Հայոց Ռուսաստանի Պետարապիկոյ և այլոց :



Ի Մ Ո Ս Կ Ո Վ Է .

Ի տպագրութան Հայկական Ճեմարանի Տեսրց Լազարեանց :

1830. — n $d^p \zeta [\theta :$



Չոր օրինակ ամենայն ֆեստք և երկպառակութիւնք՝ ՚ի Տղիտութե-
նէ ՚ի ներքս մոտնեն և ապականեն զողիս մարդկան, և ՚ի ճշմա-
րիտ զիտութենէն զըկեն, այսպէս և ամենայն բարիք՝ որ յԱստու-
ծոյ առ մեղ ժամանեն և լուսաւորեն զհողիս մեր, և որ այլ ևս հո-
գեոր բարիք իյեն, Գիտութեամբ առ մեղ գոյանան և ֆան և պահ-
պանեալ լինին, և Տղիտութեան խաւարն անբաւ հեռաւորու-
թեամբ փախտական լինի. զի չե՛ք խաւար զգալի՝ որ զիտէ այն-
պէս կուրացուցանել զմարմինն, որպէս Տղիտութիւն զմիտս. և ոչ
գոյ լոյս որ այնպէս լուսաւորէ զաչս, որպէս Գիտութիւնն զհողիս :

Սարգիս Շնորհալի.

(Բէն . յաճե՛ . Տառ . Գ)

~~~~~  
Ընթերցեալ մեր զձեռագիրս զայս, և ոչ գտեալ յայնմ ինչ հա-  
կառակ սուրբ Եկեղեցւոյ և Հաւատոյ մերում կամ բարի վարուց,  
հրամայեցաք տպագրութեամբ ՚ի լոյս բնծայել :

Դատաբնիչ գրոց Միքայէլ ծայրագոյն Վար-  
դապետ Սալմանթեանց Կոստանդնուպօլսեցի .  
Վանական սուրբ Էջմիածնի, և Յաջորդ Եկե-  
ղեցւոյ Հայոց Մոսկովայ :

՚ի 23 Դեպտեմբ. 1830 . ՚ի Տոհմով .

5419

## Վ Ե Ն Խ Լ Բ Ե Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն .

յոթուհ

Յաղագս Թարգմանի եւ Տպագրութեան Գործակալի եւ Տպարանի  
Եւ Պատմիչի Կարգին . եւ իմ յաղագս հանգանակող Քէմբրիճի :

Բազմազգիւն եւ կարծիք եւ դատողութիւնք իմաստասիրաց վրան  
զինչութեան կրթութեան կամ դատարարութեան (Վերջինս),  
բայց ամենեւին զրեթէ միաձայնին յայտնի թէ կրթութիւն է բարեկազ  
մութիւն եւ ուղիղ կերպաւորութիւն բովանդակ մտաւոր եւ բարոյական  
կարողութեանց հոգւոյ, համեմատ վերջին նպատակին՝ առ որ նախա  
սահմանաւ է մարդս : Կամ այսպէս . կրթութիւնն է եւք եւ աճու  
մին ՚ի ներգործութիւն ամենայն կարողութեանց, զորս պարզեւեալ  
է մարդոյս Բնութիւնն ՚ի ծննդեան անդ . այլ եւ զօրացումն եւ ընդ  
արձակումն բնական եւ ստացական միջոցաց եւ ընդունակութեանց  
առ ՚ի հասանել ՚ի ցանկալի նպատակ իւր : Մերձաւոր նպատակ  
ամենայն մարդոյ է երջանկութիւն եւ բարօրութիւն . բայց այս բա  
րեք անչափ բերկրականք վրան մեր, եղեալ կան ոչ միայն ՚ի նոյն  
ինքն ՚ի մարդն, այլ եւ ՚ի կցորդական կապակցութեան նորա ընդ  
մարդկային ընկերակցութեան . որոյ վրան եւ կրթութիւնն կատարե  
ւապօրծէ ոչ միայն զբացորոշ զառանձին բարիս միայնոյ ուրուք, այլ եւ  
զբարօրութիւնս բոլորածիր ընտանեաց, քաղաքաց, եւ որւոց Հայ  
րենեաց . յորմէ եւ ՚ի միւսմ անգամն ջ բոլորին ճոցապարուրէ զա  
մենայն զմասնաւոր եւ զընդհանուր օգտաշահութիւնս քաղաքած  
ղով կենակցութեան : Ապա քանի՞ նուիրակատար եւ վսեմապանծ  
չիցէ գործս, քանի՞ ընդարձակատարած եւ հայիւ ուրեմն մտաց հա



սանեիլ չեցէ թէ՛ վերկադրծ և թէ՛ չարասադիր ներգործութիւն նորին, զթրպիսի բազմապարունակ և հեռաձկբ հետեանս ոչ ունիցի յինքեան, որոյ ոչ ժամանակն և ոչ իսկ մահն կարէ դնել սահման: Ապաքէն կարի՛ դժուարին, կարի՛ մեծայարգ և կարի՛ բազում են պարտաւորութիւնք իմաստուն Ղաստխարակի:

Ի վերայ այսր ամենայնի, կրթութիւնն՝ որչափ և զօրաւոր իցէ, ոչ ստեղծանէ ամենեւին զնոր մարդ, այլ վարժէ զնա միայն. ոչ տայ նմա զնոր կարողութիւնս կամ զնոր ընդունակութիւնս, այլ միայն չքնադազարդէ և խորսխեալ հաստատէ զայնս. ոչ բերէ նմա ինքնին միայնակ ոչ զերջանկութիւն և ոչ զտարաբախտութիւն, քանիլ տերմուսք բարւոյ և չարի Ի նոյն Ի սիրտ մարդոյ արկեալ գտանին Ի բնուտ, այլ առնէ զմեզ առաւել կենցաղալիլթս և ընկերակաւս, ըստ որում մարդս անդատին ծնեալ է վաւրն ընկերակցութեան: Յայսոյնն ուղիղ իմացեալ լինի, թէ՛ օրէնք կրթութեան շնորակոտոր մուրաղիւտ ինչ կեղծիք, հնարեալք լը բերման մարդկայինս մտաց, այլ ինքնաձեւադիր դժադրեալք Ի բնութեան մերս հասարակաց նախամօրէ. և լը այսմ կրթելն նշանակէ՝ միտ դնել ամենայն ճշդութեամբ արգարահրահանք խըրատուց և աղղեցութեանց բնութեան. կամ շարահիւսեւ զլթելն, զոր նայն ունի սկզբնաւորեալ:

Այսուրջ մտօք նկատեալ զանթիւ արարածս բնութեան յինհանուր յիմանալ նոցայն զուղակից կապակցութեան, նոյն և զնրեւրով զկարգ, զընթացս, զճարտագայութիւն, զվիճակախիտութիւն և զնեղործութիւն նորին, ամենայն ուրեք տեսանեմք զյլ իրութիւն և զհամաձայնութիւն, որք իբրև հիմնական օրէնք սահմանադրեալ գտանին վասն նորա Ի բարձրելոյն: Ի բնութեան ամենայն ինչ լծակցեալ գտանի լը միմեանս. ամենայն ինչ արբանեկէ միմեանց՝ ոմն այսպէս և ոմն այնպէս. և Ի մշտնջենակարգ շրջանի արարածոց զգալեաց՝ ամենայն ինչ դիմէ առ մի և եթ կէտ, իբրև Ի նպատակ իւր սեփհական: Եւ յայսմ իսկ միութեան իբրև Ի յաւիտեանից կանգնեալ յանշարժ հիման վերայ, արձանանան բոլոր բարիք նորա, գեղեցկակազմութիւն և շքեղութիւն նորա, անսփոխիւթութիւն

և անսպառուժիւն նորա : Մի և նոյն արեգակն է որ ճիւրանածար-  
 ւէ պայծառափայլ ճառագայթիւք իւրովք զանյառակ խորս անդըն-  
 դոյ, և զլրութիւն աշխարհի, տածելով զնոսա անսպառ նշողիւք  
 կենդանասերութեան : Ո՛չ ապաքէն մի և նոյն կարգն միութեան  
 պահի և ՚ի հոգեւոր փոքր աշխարհիս՝ ՚ի մարդս, ՚ի զուգականութե-  
 թիւնս մոտւոր և բարոյական կարողութեանց նորա . ո՛չ ապաքէն  
 մի և նոյն Լճնակարողութիւնն է յերկնայինն իմաստութեան և ՚ի  
 բարութեան . ո՛չ միասնական յաւիտենականին ճայրագոյն արեգա-  
 կամք մոտց և կամաց՝ լուսածնեալ գեղերվին իննաստիճանեան դա-  
 տալումք անմարմին զուարթնոցն երկնից : Մտէ՛ք ՚ի ժողովս ընկե-  
 րութեանց այսր աշխարհի . մտէ՛ք ՚ի խորս մի միայն մարդոյ, զոր ՚ի  
 հնուֆն իմաստասէրք փոքր աշխարհ կոչէին . մտէ՛ք քննեցէ՛ք, ո՛ր  
 արդեօք հնար իցէ տեսանել զմիտ առանց կամաց, զգործիս առանց  
 ներկործողի, զկեպն առանց նիւթոյ, զգործողութիւն ինչ առանց  
 զիտաւորութեան . կամ յանդրադարձ սակի : Զայսպիսի ահա ու-  
 սուցանէ մեզ մոտւոր նրբապնինն քննութիւնն և փորձն բազմա-  
 մեայ, զոր ՚ի կիր արկանեմք ամենայն զգուշութեամբ ՚ի հետազօտե-  
 լըն զընութիւնն . և եթէ կրթութիւնն՝ որպէս ասեն, է այլ ի՞նչ  
 բնութիւն, մնարթ իցէ ապա նմա հեռանալ յօրինաց սորա ՚ի հը-  
 հանդէն զհոգեւոր կարողութիւնս մարդոյ . և եթէ օտարասցի՝ զը-  
 արդ կարացէ ակնունել կարեւոր հասկաթուռ պտղաբաղութեանց :  
 Հնար ի՛նչ իցէ արդեօք բաժանել զլոյսն ՚ի ջերմութենէ, առանց  
 հասուցանելոյ երկոյունց իսկ զնա, առանց եղճանելոյ զներգործու-  
 թիւնս նոյոյ, և առանց դարձուցանելոյ զայնս ՚ի չար և ՚ի դժոխակ  
 գեան մարդոյ . կամ այլով բառիւ՝ կարէ՞ արդեօք կեալ հրաշա-  
 րուստ լուսաւորութիւնն այն մոտւորական առանց բարոյականին :  
 Գիտեմք ամենեւեան թէ չէ՝ հնար սիրել զինն առանց ճանաչելոյ  
 զայն . զի ճանաչելն կարգի առ այս, զի որդեսցէ ոք զբարին ՚ի չա-  
 րէն և օգտեսցի բարեաւ . և թէպէտ ճշմարիտ է կանոն առ ամե-  
 նեսեան, սակայն զիմրդ յաճախ տեսնի հակառակն այսմ ՚ի փուժ-  
 իսկ անձին, որ ճշմարտախնդրութեամբ ճանաչէ և ատրոժէ զբա-  
 րին, բայց գործով զհակառակն կատարէ : Եւ այսմ է ապա զլիա-  
 ւոր օգուան և ազգեցութիւնն ճշմարիտ դաստիարակութեան, զի



տայ մեզ նա ոչ միայն ճանաչել և ընտրել զըսորին կամ զչարս,  
այլև զըսորին արդիւնալից գործով կատարել յօդուտ մը :

Գիտութիւնք և արհեստք սեփական աւարկացք կը թուծեան  
մարդկային մտաց, յանդիման նկարին աչաց մերոց իբրև հոյակապ  
հրաշքարտար շինուած ինչ կառուցեալ ըստ գեղեցկալծորդ գը-  
ծադրութեան բնութեան յամենայն տեսակ տէրութեան նորա • ամե-  
նեքեան նորա կացուցանեն զընկերական ընդհանրութիւն, հանդոյն  
նորին ամբաւածաւալ գերդաստանացն 'ի զամբի, 'ի ծովու և յօ-  
դըս • ամենեքեան նորա լծորդեալ են ընդ միմեանս անբաժան կա-  
պանօք համադգութեան և համակրօնութեան • ամենեքեան նպաս-  
տաւորեն միմեանց ընտանեկան զուգալծութեամբ • և իւրութեան իւրն  
'ի նոցունց ընթանալով ըստ երևութին յորոշ ինչ շուկ, 'ի միա-  
սին յարձակին առ մի միայն նպատակ • իմա, առ 'ի նկարագրել ըզ-  
բնութիւնն, և առ 'ի բանալ զգաղմոսն խորհրդոյ նորա յանցեալ  
և 'ի ներկայ ժամանակի : Իսկ մարդս իբրև գեղեցկալծաշահ ճար-  
տարապետ կամ տէր այսր շինուածոյ՝ բարեկարգէ զայն ևսև զօ-  
րութեամբ մտոյն, ըստ էական օրինաց բնութեան, և վասն այսր  
իսկ պատճառի՝ 'ի խորհրդածեալ գործս մարդոյ անշուշտ հարկ է զի  
գացի ուղղադրոյ՝ կարդ, դասաւորութիւն, համահամութիւն և  
ճշդութիւն • իբր զի առանց այսոց պարագայից լինէր ապաքէն մարդ-  
արտաբոյ բնութեան, և արտաբոյ անձին իսկ իւր : Յայսմանէ ապա  
և ընթացքն ուսմանց, նոյն և աղքեցութիւնք նոցա 'ի վերայ մեր՝  
են որդեալ, ճիշդ, աներկբայ և անվտիտ • նոյն ինքն միտքն եհան  
զդոսին անմիջապէս յեութենէ և 'ի կապակցութենէ էական համը-  
կարդեաց զայն և զհետ երթայ այնց ըստ իւրում սեփական համը-  
գանաց : Այսպէս ահա ուշադիր և խոհական ձեռնտուութեամբ իմաս  
տուն վարժապետի ուրուք՝ խակակութ դասողութիւնն մանկան այն-  
չափ իսկ հեշտեաւ և վտւթով սկսանի պայծառանալ, որչափ աչք  
և ականջք նորին սկսանին տեսանել զնիւթական և լոկ զհրնչ-  
մունս ձայնի • այսպէս միտք նորա ճոխացեալ սերճանաց բնական,  
պատմաբանական և բարոյական դիտութեամբք • այսպէս ընդունա-  
կութիւնն դատելոյ վաղալարժեալ սրի 'ի նմա նրբիմաց արհեստիւք  
չափաբանութեան և փխխտփայութեան : Գանձեալ ունի այնու-



հետև մանուկն 'ի յԵղղութեան իւրում՝ զգիտութիւնս հին և նոր  
 լսեմայարգ լեզուայ. արտմութիւնն յանդիման նկարէ առաջնեայ  
 նորա զերևելի և զարժանայիշատակ անցս վաղեմի դարուց. մեծա-  
 գով և արժանաւիառ սխրագործութիւնք Ղիւցազանց յայնմ նկա-  
 րագրեալք՝ յարուցանեն 'ի սրտի նորա զբքազանն սէր առ հայրենիս  
 նորուն. մեծամեծ ստուերք թագաւորաց, գիւցազանց, իմաստա-  
 սիրաց և օրէնսդրաց արձանանսն և անդէն լուծանին յաւերակս  
 թագաւորութեանց՝ հանգոյն մառախլապատ գոլորշեաց ընդ օդս երկ-  
 նից. ձեռնաձիգ առաջնորդութեամբ Լիննէի, Բիւֆինի և այլոց՝  
 մանուկն ճանապարհորդէ յամենայն սահմանս բնութեան, որոշէ  
 'ի միմեանց զամենայն տունկս և զըջոս, զվանաքի և զանտեսանելի  
 միջատս և զտորունս ըստ ամենայն սեռից և տեսակաց : Նէփոսնք,  
 Հերշէք և Լապլսսք տանին զնա յերկնային դաւառ. ընդ նմա  
 խօսակից լինին Պլատոնք, Լոքք և Քանթըք զնորին սեփհական  
 մտաց, զնեղործութեանց նորին, և զվիճակէ հոգեւոր և ծայրագոյն  
 աշխարհի : Հիպոկոնք, Հոպպէզք, և Մոնթէսք ուսուցանեն ման-  
 կան զսկզբունս կառավարութեան քաղաքաց թագաւորութեանց, զե-  
 րաւունս ազգաց, զբարեբախտութիւն և զտարբախտութիւն վիճա-  
 կի նոցա, այլովքն հանդերձ : Բաբէ՝ ճրարիտ անսպառելի ճոխու-  
 թիւն է այս ամենայն վասն մտաց, քանի՞ լայնատարած արձակա-  
 դաշտ առ 'ի հնձել զմշտադաւար և զանապական պտուղս կենաց :  
 Յաւել յադրոսիկ և զապշեղուցիւ արհեստս և զհրաշալցոյց զե-  
 տութիւնս, հնարեալս 'ի ձեռն աշխոյժ քաջահուժեղ երեսակայու-  
 թեան և աղնիւ ճաշակաւորութեան 'ի բիւրատեսակ ծաղկանոցս չքը-  
 նագութեանց : Լըդարե Գանձ ցանկալի և մեծագին, Գանձ անըւ-  
 պառ և անմահական :

Երկու են տեսակք զխոնական կրթականութեան. առաջինն ճո-  
 խացուցանէ և վարժէ զմիտս մեր, իսկ երկրորդն՝ հանդերձէ հա-  
 մաբարտակէ զայն սեփհական պարտաւորութեանց և վիճակի անուա-  
 զընաց կենաց մերոց. յառաջնունն՝ հանդիմանայ այր բանասէր և  
 զխոնական, իսկ յերկրորդունն՝ ընտիր քաղաքացի բոնացեալ զի-  
 տութեամբք. յառաջնունն՝ մի միայն ուսեալ, իսկ յերկրորդունն՝  
 քաջուսունն, և կարող օգտամատոյց լինել անձին իւրում և այլոց իսկ :

Ո՛վ սրբազան կրթութիւն և մաքրաբարոյութիւն . դո՛ւ միայն լուսազարդես զձիրս մտայ մերոյ, զձիզն աշխատանաց և զճոխութիւն յիշողութեան . դու տաս կորովաձիգ մտաւոր կարողութեանց մերոյ զառաջնորդութիւն, զարժանաւորութիւն և զերկնաթափչ վեմութիւն . դու առթես զհոգեփթիթ օրհնութիւնս բնութանց, հասարակութեանց, թագաւորութեանց, ամենայն դիտաւորութեանց և զործոյ մերոյ . դու առնես զգերազանցութիւնս մտայ մերոյ մեղ և այլոյ սիրելի և մխիթար . ոչինչ արդիւնք անձնաշահ, ոչինչ պարգեք աշխարհի կարեն խրախ առնել զայն սիրտ, յոր դուդ ոչն բնակիս . դու կրկնես մեղ անդադար յապանջս . ո՛վ Հրահանդիւք, ո՛վ Արժապետք, չէ՛ բաւական առնել զմարդն միայն իմաստուն, այլ պարտ է առնել ևս զնա առաքինադործ և բարեւեք :

Բայց յի՞նչ արդեօք առկայացեալ իցէ այս ճշմարիտ երջան կութիւն, զոր բերել ունի շնորհապարգև կրթութիւնս . յայսմ միայն, զի ցուցցէ մեղ թէ բոլոր արտաքին բարիք աշխարհիս են անկայուն՝ ունայն՝ և անարժան աղնուական կոչման մարդոյ . թէ ՚ի մեղ յանձինս մեր բղխէ անհատահոտ աղբիւր ամբախարխիս երջանկութեան, զոր ոչ թշնամիք, ոչ բորբոքեալ հուր, ոչ հեղեղ ալեսատ ջուրց, և ոչ նոյն իսկ ժամանակն համակործան կարեն թարշամացուցանել . թէ յայսմ ներքին բարութեան կանգաղեալ գտանի իսիական էութիւն մարդոյ, սխրալի նորին աղատութիւնն, բնաւորութիւնն և փառքն : Եւ ի՞նչպիսի ինչ իցէ այս մեծագին դանձ : Այն է խաղաղութիւն ընդ ինքեան, ուղղաշարի ճանաչումն անձին, մաքուր խղճմտանք, և բարեսրտութիւն անփոփոխ : Ո՛րչափ բարիք ճագին յայսմ սրբազան ներդաշնակութենէ որ ՚ի մէջ մտաց և կամայ մերոյ, ՚ի փոխադարձ և ՚ի հաւատարակչեւ ներդործութենէ նուցա ընդ միմեանս . եւ ընդ հակառակն՝ որչափ չարիք ծնանին ՚ի յիւմարակորդս կամակործութենէ և յամբարտաւտութենէ խաղաղութեան դատողութեան . դիւապատիր բարձրամտութիւնն պաշարեալ դուրս պատրդական կեղծեօք խզէ զամենայն կապանս, որք զուգակցեն զնա ընդ իւր նմանիս . առ ոտն հարկանէ նպերտ բարութք զամենայն դաշինս, զամենայն վերաբերութիւնս . ստեղծանէ վասն իւր զնոր մը



տացածնունդ ուշնարհ, որոյ և կենդրոն միջակէտ զինքն համարի . սրբաթի ֆեստակար և տաղտկարի է վասն այլոյ, այնչափ ևս խղճարի է յանձին իւրում . քանզի չիք վասն նորա ոչ արդարականն սէր, ոչ կենդանարմատ բարեկամութիւն, ոչ օրինակատար առաքինութիւնք, դուարճարարք սրտի ևս և յետին սոսկականի . զհան նորա բարեխրութիւն, բարեյօժարութիւն, հաւատարմութիւն, բերկրութիւն և անդորր զուարճութիւն, որք ծաւալեալ դտանին յակմբի բարեպաշտասէր և լուսաւորամիտ Հատարակութեանց . նոյն իսկ զիտութիւնք են վասն նորա սուր երկայրի, և աղջամուղջ խաւար մարտաշաւիլ, յորոյ միջի տեսանէ զարհաւիրս միայն, զկռովութիւն, զկենդակարծ դաւադրութիւնս, զձանձրութիւն, զառապանս, զանհանգստութիւն և զյուսահատութիւն :

Այլ ոչ այսպէս են իրք 'ի ծոց բարեխորհուրդ և ազնուութիւննաբեր Արթութեան . աստ նախապատրաստ զըսհաւորիմք 'ի մարտ առ պատերազմայաղթ հանգիստնալ կուրաստեղծեալ կրիւյ մեքոյ . աստ հաստարմատ տարանամք 'ի բայորոջ բնաւորուն անձանցս 'ի մտաց մտին և 'ի կամաց . աստ իմաստուն դաստիարակն և խոհական վարժիւն երկարատես քննութեամբ նախանշմարէ՝ թէ ներքին այն խոսութիւն, որ է խմբք և ծրարք յանկութեանց՝ զգացողութեանց՝ և թիւրաթափառ բնաւորութեանց մարդոյ, որով տարազու ճշարձակութեամբ ստեղծի յանձին մանկան, զիմարջընջափիւռ միապետէ յանձնասէր բանալարութեան, և զիմարջ յանդրդին պաշտել զխղճատանջ կիրս . հանդոյն հմուտ բժշկի քաջ քննեն ուսուցիչք զաճումն և զընթացս թիւրութեանց և զտկրութիւնս անձանց մեքոյ, և 'ի գործ դնեն զամենայն կարեւոր հընարս առ 'ի սանձակոծել և հնձան հարկանել այն : Արմատ ամենայն նախաբորբոք յուզմանց հոգւոյ է խաւարասովոր անձնաւորութիւնն, որ է դալարացամար պտուղ մարութ և աղնիւ զգացման սիրոյ առ հայրենիս և առ անձն իւր . այս անձնասիրութիւն է աղբւրք ամենայն մարտապայման ունակութեանց, զազանաբուժմար կրիւյ, ազգի ազգի մեղաց և ոճրադործութեանց . ընդ հախաւակն՝ անմեղ ընդաբոյս սէրն առ անձն իւր է ստինք և ծորակ ամենայն լուսածնունդ առաքինութեանց և զիւցաղնալայել սխրագործութեանց : Առեւոր



զինուէք ճշմարտաբարող կրօնի և բորբոքեալ զաւակաւս՝ սիրով առ առաքինութիւնս ուսուցիչն այն՝ ամենեւին ՚ի բոց փարատէ յամենայն իրաց աշխարհիս զարտութիւն զքօղաբօղեալն նուարտան, ամենայն ուրեք ցուցանէ որդեգրաց իւրոց զբարձրագոյն զհոգեւոր և զերկնային կանոնս պատուոյ, սերագործութեան, վեհանձնութեան, սիրոյ առ հայրենիս և առ մերձեւորս. ամենայն ուրեք ցուցանէ նոցա զՄատուածն բարութեան զիմաստութեան և զարդարութեան. ամենայն արհեստք, ամենայն գիտութիւնք թնդան ՚ի շրթունս մանկան խրատութ ամենամաքուն Բարոյականութեան :

Անտարակոյս հաւաստի եղեալ սեփական մտօք մերովք և փորձով զայսմ անէ, նոյն և կենդանախարուկեալ փափկազգած շնորհապարտութեամբ առ իմաստապարգև տաճարս այս Մուղայից, ոչ կարեմք ծածկել լռութեամբ և զայն ամենայն սերալի զերազնցութիւնս, որովք կրթութիւնն հրապարակական և հանրական առաւելու քան զառանձնականն : Ճշմարտութիւնս այս վաւերագործեալ է արդէն անտարակոյտ հետաքննութեամբ խնամածու կառավարութեանց թէ՛ առ հին՝ և թէ՛ առ նոր ազգս, իբրև գլխաւոր պատճառ՝ որ լիաբուռն անձրեւէ Հայրենեաց զբիւրատեսակ բարօրութիւն :

Քաջահմուտ փորձառութիւնն ծնողաց դէտակն ունի ՚ի հեռատանն և քաղցրութեամբ ծիծաղելով զիւրոյ մանկանն խաղութ, սպասէ բարեպատեհ ժամին հասակահասութեան, յորում և անդորրութեամբ սրտի աւանդէ զմանուկ իւր ՚ի գիրկս խնամակալութեան խոհական և բարի ուսուցաց՝ ՚ի ժողովս հատրնտիր երջանկավիճակ հասակակցաց, իմաց դու՛ ՚ի ճեմարանի. ուրանօր կենդանատուն նեկտարաւ գիտութեանց ստանայ արդէն կրթութիւնն զիւրն կատարելահասակ կերպ և զկարգ. այս է՝ ոչ միայն զբարեկարգութիւն մակաղութեանց ըստ աստիճանաց հասկացողութեան և հասակի ուսանողացն, ոչ միայն զառատութիւնն ուսումնական գործեաց և միջոցաց՝ զորս իւրաքանչիւր հայր զաւակաց ոչ կարէ ունիլ, այլ և որ առաւելն է՝ զբարի հոմանախանձորղութիւն, զփոխադարձ օժանդակութիւն ՚ի ճիգն աշխատանաց, և զփրանախանձ փափաքանս առ բարի՝ անդադար յարուցեալ ՚ի սրտի մանկանց : Սոքին են ահա գաղտնագործ մեքենայք, որ տան մանկանց կարողել յառաջադէմ զար-

գանալ ՚ի հրապարակական ճեմարանս ղիտութեանց : Եթէ զըսոյցս կանոնութիւնս ՚ի լծակս քննութեան կշռեսցուք, բւերաբեղուն մեծամեծ օգուտք տեսանին ՚ի ճեմարանի քան այլուր : Եթէ կրթիմք մեք առ ՚ի վարել զիեանս յառփայտս ՚ի հասարակութեան ուրեք, ապա զի՛նչ այլ իցէ այս սակաւաթիւ կաճատակից ժողով հոլարանի մանկանց ՚ի գուղաբնակութեան ճեմարանիս, եթէ ոչ կենդանոտիպ նմանահանութեամբ ճշգրտագործեալ պատկեր բարեկարգ Հասարակութեանց : զի և սա ունի նմանապէս զիւր ինքնուրոյն գործնա, զպարտաւորութիւնս, զստիճանս և զկախումն զիրեաց . միով բանիս . աստ է տեսնել զապագայ վասն մեր զընդարձակ աշխարհս . բայց այնու տորբերութեամբ, զի չունի սա զայն խաւարախորդ չարիս և զվիշտս, որք յապագայումն ամենայն ուրեք համասփիւռ քարընդոտնէն զընթացս մեր : Աստ ՚ի ճեմարանի է տեսնել զյոգնաբեղուն բնաւորութիւնս, զայլատեսակ որակութիւնս, զարժանաւորութիւնս և զձիրս մտաց մտնկանց . աստ են ուրեմն նոյն իսկ սրբազան պաշտօնատարութիւնք, զգուշութիւնք յընտրութեան բարեկամաց, երասանակոծումն կամակորութեան, անկեղծաւորութիւն ՚ի սիրելութեան, երախտազիտութիւն առ բարերարս, և փոխադարձ շնորհասպարտութիւն :

Օ երկա գլխաւոր անձնիւր ներգործութիւնս ունի կրթութիւնս այս . զի նախ ճոխացուցանէ ղիտութեամբ և վարժեալ սրէ զիմացական կարողութիւնս մեր . երկրորդ՝ ուղեցոյց և առաջնորդ լինի մեզ ՚ի պարտաւարտչաճ նպատակ ապագայ մերս պաշտօնատարութեանց . և երրորդ՝ իբրեւ պսակ կամ լրումն ամենայնի՝ հիմեալ կանգաղէ ՚ի սիրտս զմարտուն բարոյականութիւն : Ի դուգախառնութենէ այսց ներգործութեանց բարեկրթութեան ծաղէ այն ներդաշնակութիւն ՚ի մտաւոր բնաւորութիւնս մարդոյ, այն հաւատարակչիւր գեղեցկադասութիւն ՚ի մէջ մտաց՝ իբրու դատաւորի, և կամայ՝ իբրու գործակատարի, հանդերձ օժանդակութեամբ շնորհաց, որ յերկնից ՚ի բարձանց առաքի մզ ՚ի ձեռն խրատուց երկնասպարգեւ մերս կրօնի :

Առ այս իսկ ահա ազգաշահ կենցաղօգուտ վախճան կառուցեալ է ՚ի Մոսկով ՚ի բարեհալի բարերարաց անոն պայծառ Տա-

ներն Լազարեանց (1) և սոյն այս հայկական ճեմարան Բրեւերեան լեզուաց, առ 'ի հրահանգել զմանկունս Հայոց յամենայն աղջս կըթ-  
թուլթեանց յօգուտ և 'ի պայծառութիւն մերս Հայրենեաց :

'Ի պէտս կառուցման հոյակապ դամարձակիս այսորիկ, և վա-  
սըն բազմատեսակ տանց և բնակարանաց ամեն պատկանելոց, վասն  
շինուածոց, և մայր դումարովն դրամոց առ 'ի դարման տանել ճե-  
մարանիս և 'ի հաստատել զնոր ապարան Եւրոպական և Ասիական  
լեզուաց, աւագադորձ բարերարքն Լազարեանք՝ հիմադիրքն և  
ժառանգք նոցա՝ սկսեալ 'ի 1813 ամէ մինչ յառաջակայ ամս 1830  
նուիրեալ են յառաո զանձուց իւրեանց աւելի քան զինն հարիւր  
հազար ռուբլիս (900,000) կայսերական թղթադրամ (աւիւհայի) (2) :  
Գործք արդարեւ արժանաւայել միմայն ճշմարիտ Հայրենասիրաց և  
սոցաշէն Դիւցազնաց : Հիմարկութիւն գաղատոտաշէն ճեմարանիս  
ըստ վճուց զլիաւոր կառավարութեան տեղւոյս՝ սկսեալ է և վճար-  
եալ յընթացս 1813 և 1814 ամաց ըստ ընտիր և խնդատեսիլ  
ձեակերպութեան ճարտարապետաց : Իսկ մեծահանդէս դասատու-  
ութիւնն 'ի ճեմարանիս՝ անմոռաց 'ի դարապատում գրութիւնս  
ազգիս, սկսաւ 'ի 1816 ամի : Յայսմ երջանիկ ժամանակէ հետէ  
մինչ յայս ամ տեսան՝ յընթացս չորեքտասան տարւոց տրձակեալ  
են ոստի աշակերտք թուով իբր 309 : Մշտնջենաւոր հաստատու-  
թիւն ճեմարանիս ամենեւին յապահովս է կացուցեալ առատապարզե-  
տրովք և արդեամբք, ևս և անդուլ հոգատարութեամբ 'ի Տէր  
հանգուցեալ առաջին սխրագործ հիմադրաց և բարենախանձորդ  
փութաջան ժառանգաց Տեսրց Լազարեանց : Իսկ զչնորհալիս պը-  
տուղ ճեմարանիս ամենայն ուրեք հասր է տեսանել յերակտամեծար  
և յարժանաւոր աշակերտս սորին • որք ամենայնիւ կարեն առաւե-

(1) Օ այս մահաւորութեանց՝ Խաբաթեանց Բաշա  
հաւրէն համայնաց առաջին հայնն 'ի հայեբարար պարագրքին (հա-  
մաւ) աղեւտմանութեան, յորում հիշէ Լազարեան, գրել մշա 'ի հայունս  
Լազարեանց • զի զմահաւորութեան չէ արժան էր իւր հոգորդել :

(2) Մի առաջին Խաբաթեան առաջին արժէ աշխատէր էրէս դո-  
տուլ համայն • ըստ որոյ յնշեալ գործարդ ըստ հաշուն գրամոց համայն  
լինէ երէտ միւրն և էօլն հարեւր հազար (2, 700, 000) դոտուլ :



լոււ զպատիւ տեղւոյն, ուր ընկալանն զիւր[թու]թիւն առ 'ի մտանել յասպարէզ արդիւնակատար ծառայութեան Հայրենեայ և համալս-  
ղեայ իւրեանց :

Ճեմարանս այս դտանելով այժմ 'ի ներքոյ բարձրագոյն հո-  
վանաւորութեան Օգոստոսիայլ Ապսեր, ունի զամենայն կարևոր  
հնարս և զամենայն բարեպատեհ միջոցս առ 'ի մարդել և հրահան-  
դել զնորահասակ մանկունս . այժմ հորդեալ է աշակերտաց մերոյ  
ճանապարհ յետ աւարտելոյ աստ զընթացն ուսման՝ ըստ օրինաւոր  
հարցաբանութեանց հանդերձ արժանապատի վկայականօք ճեմարա-  
նիս՝ մտանել 'ի կայսերաշէն Համալսարանն (ռւնիւէքսթէթ), և անդ  
արժանանալ արքայական աստիճանաց և պատուանշանաց յուսուֆտ-  
կան մասին : Ապա ուրեքն բարեգործութիւնք պայծառ Տանս Լա-  
զարեանց թէ յօդուտ Տէրութեան և թէ 'ի բարեբախտութիւն  
բոլոր ազգին Հայոց, անկշռելի են և յաւերժական յիշատակաց  
արժանի . զի բոց է արդէն դուռն վասն Հայոց, որք միանդամ  
գիտութեանն ցանկանս պերճանալ դանձուք և ձրիւք, և կազմեալ է  
վասն նոցա ձեռամբ ազգասէր Տերանց սեղան ձրիաբաշխ ուսման  
և անսպառ ողորմութեան : Սոյն այս ճեմարան էր, որ զարթոյց 'ի  
սիրտս հայոց զաշխոյժ ցանկութիւն առ կենսագործն լուսաւորու-  
թիւն, առ թաղուհին ամենայն առաքինութեանց . այս ճեմարան  
եղև, և այժմ իսկ է շարժառիթ և օրինակ կառուցման և բազմա-  
պատկութեան դպրոցաց յայլևայլ քաղաքս հայոց :

Յառաւել պայծառութիւն ճեմարանիս՝ բարձրագոյն հրամա-  
նաւ Տէրութեանն՝ 'ի Սանկտբերլլուրկ յառանձին ժողովի Նախա-  
րարութեան (սթիքթի) ազգային լուսաւորութեան՝ յօրինեցան կար-  
գադրութիւնք վասն Լազարեանց հայկական ճեմարանին Արևելե-  
եան լեզուք, որք այժմ 'ի գիտութիւն ամենեցուն 'ի լոյս ընծային  
տպագրութեամբ, տրոհեալք կարգաւ 'ի չորս գլուխս բանից և 'ի  
բաղում հատուածս հանդերձ վերջադաս յարադրութեամբք : Յօ-  
րժամ բացեալ լինի պարապատեղի, համեմատ ներքոյ գրեալ կանո-  
նաց ընկալեալ լինին 'ի ճեմարանս յաշակերտութիւն՝ 'ի սահմանա-  
դրեալ ժամանակի՝ մանկունք հայոց յաղքատաց և յորբոյ անտի,  
որ վարժին և դարմանին ծախիւք բարերար իշխանացս, ևսև ըստ

վճռելոյ ճեմարանիս մտանեն աստ թողականու աշակերտք, որք ըստ ասորադաս կանոնաց հատուցանեն վասն դասառութեան զլախաւոր տարեկան ուսման :

Այսուհետեւ որք միանգամ ՚ի մերայնոց ունին զբաւական կարողութիւն վիճակի, պարտին մատուցանել զաւակաց և ազգականաց իւրեանց զծայրագոյն երջանկութիւնն լուսաւորութեան՝ յանձնն արարեալ քնոսա ՚ի դաստիարակութիւն ճեմարանիս, ուրանօր ընդ հրահանգութեամբ խոհական դաստիարակաց՝ շտեմարանեալ նոցա զհոգեւելոյս ուսմունս և զգիտութիւնս ևսն զբարի կրթութիւնն ՚ի բարոյական մասին, անշուշտ ունիցին զզէպ բարեպատեհ և զերաւունս արժանանալոյ արքայական պատուանշանաց ՚ի զանազան պաշտօնատարութիւնս Տէրութեան : Եւ այսոնք ամենեցուն և արդէն հաւատեօք իսկ ծանուցեալ, թէ որչափ բազում են ճեմարտիւ կրթեալ արժանապարզ և առաքինագործ անձինք, այնչափ ևս առաւել պատիւ է այնմ հասարակութեան, յորում ծաղկին այդպիսի բարեկիրթ անդամակիցք :

Ոչ շատացեալ այսչափ բազմաոտեսի բարեկարգութեամբք ՚ի պայծառութիւն ճեմարանիս մեծերոկոտ Բարերարքս, փոյթ կալան յառաւելագոյն բարեկարգութիւն և ՚ի բարեշինութիւն նորին՝ վերստին նորօղել յայսմ ամի զասհմանեալն յառաջին աւուրց հետէ զխորհրդարանն, յորում ընտրեալ և փոխեալ լինին նորին անդամք : Եւ այժման վիճակի՝ Աթոռակալ այսր խորհրդարանի է Հռաքարծուն ճեմարանիս՝ պետական խորհրդականն (Բարադէ Խալէֆէ) և Ապետն Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց : Գործօնեաց անդամն այժմ են, Կառավարին ճեմարանիս պետական խորհրդականն և Ապետն Խաչատուր Յովակիմեան Լազարեանց . Գանդապեան (Գօլթէֆէ) և Ապետ Դադարոս Յովակիմեան Լազարեանց . Թանգանթական զօրապետն (Դալա) և Ապետ Յովհաննէս Յովհաննեսեան Արապետեանց . Զօրագլխապետն (Ճեմալ Դալա) Պաւլոս մովսեսեան մելիքեան . Կարգավարն ճեմարանիս և Ապետն Ծայրագոյն Միքայէլ Արդապետ Սալմիթեանց . Արաւուսուսուս ուսուցիչն (Գրօֆէնօր) Յովհաննէս Թէոդորեան Կրաւուզէ : Կորդ ևս այժմ ընտրեցան անդամք զօրագլխապետն և Ապետ Դաւիթ Յարութեան Տիւննեանց . Զօրագլխապետն իշխան (Էլ-

Դեպք) և Ռափետ Դաւիթ Սիմոնեան Ռեամբլիքեանց, որոց և որդիք և սպգականք դտանին այժմ 'ի թիւս Թոշակատու աշակերտաց 'ի Ճեմարանիս :

Խորհրդարանն 'ի գործ զնէ զամենայն հնարս ջանից առ 'ի սպաճառացուցանել զՃեմարանն յամենայնի, և առ 'ի ծաղկեցուցանել զնորոգ հաստատեալ տպարան սորին արևելեան և եւրոպական լեզուաց : Ճեմարանս ունի այժմ զքսան և զերկու ուսուցիչս և զվարժապետս, բայց յայնչանէ և զայլ պաշտօնատարս ըստ արտաքին տընտեսական կառավարութեան, որոց 'ի սկիտս կարգեալ կայ առանձին տետեան առ 'ի առնել անդ զհամարակալութիւն, զօրադրութիւն և զգործարարութիւն զանազան զրուածոց :

Թիւս ուսանողաց այժմոյս 'ի Ճեմարանիս, ձրիավարժ, Թոշակատու, կիսաԹոշակ և երթեւեկ աշակերտաց՝ հասանէ յհարիւր, որք ըստ տնօրինելոյ Խորհրդարանին արձակին յիւրում ժամանակի և նորքն ընկալեալ լինին : 'Ի համարոյ սոցա են և 35 յառաջատուն աշակերտք յաղգէս հայոց, որք դարմանին ծախիւք Տեարց Լազարեանց, բայց յորոց դտանին և ութ բարեկիրթ ուսուցիչսք (սրահան) կայսերական Համալսարանին Մոսկովայ, որք էին որդեգիրք Ճեմարանիս, և այժմ իսկ խնամին աստ սորին ծախիւք՝ առ այն վախճան, զի ուսուցանելով այժմ 'ի սորին և 'ի միջին դասատունս, պատրաստեցեն զանձինս յապա ժամանակի լինել քաջավարժ դաստիարակս և ուսուցիչս մանկանց յայլեայլ զպրոցս աղգին : Թիւ ձրիավարժ որդեգրաց սահմանեալ է երեսուն, կամ առաւել՝ քառասուն : Իսկ վիճակ նոցա այսպէս է տնօրինեալ, զի քսան կամ երեսուն մանկունք լիցին որդիք աշխարհականաց, որոց լրացուցեալ աստ զընթացս ուսման, յետոյ ըստ կամաց և ընտրութեան իւրեանց մտցեն 'ի վիճակ քաղոքական, զինուորական, կամ թէ եկեղեցական :

Իսկ տասն մանկունք լիցին միշտ որդիք աղքատ քահանայից կամ սարկաւազաց հայոց, որպէս զի յետ կատարելոյ սոցա զընթացս ուսմանն՝ առանց ինչ պատճառանաց հարկաւ յանձն առցեն զեկեղեցական վիճակ, քահանայական և վարդապետական : զի այսու օրինակաւ լոյս զխտութեանց ծաւալեցել յեկեղեցականս մեր, և 'ի սոցունց առ աշխարհականս : զի բովանդակ պատմութիւն աղբիս



ուսուցանէ մեզ անխաբ, թէ ՚ի սկզբանէ և այսր ամենայն հողերը և գիւնական լուսաւորութիւնք յեկեղեցականաց մերոց սկսեալ և ծաւալեալ են յաշխարհականս և ՚ի ժողովրդականս :

՚ի ճեմարանս ընկալեալ եղեն, և այժմ իսկ դասնին մանկունք ՚ի հայոց բնակիւոյ ՚ի զանազան քաղաքս Ռուսաստանի, իմա ՚ի Սանկտիդերսպուրիոյ, ՚ի Մոսկովայ, յԱսորականաց, ՚ի Ղզլաբայ, ՚ի Մոզոուկայ, ՚ի նոր Նախիջևանայ, ՚ի Ղրիմի, ՚ի Գրլուդրիոպօլսէ, ՚ի քաղաքայ Պեսարաբիոյ, ՚ի Արաստանէ, ՚ի Կոստանդնուպօլսէ, և յայլ քաղաքաց Տաճկաստանի, ՚ի Պարսկաստանէ, ՚ի Հայաստանէ, յԱլեքսանդրէ, յԵրեւանայ, ՚ի Հին Նախիջևանայ, ՚ի Սպահանէ, ՚ի Զուլայէ, ևս և ՚ի Հնդկաստանէ, ՚ի Վալիաթայէ, և այլն :

Ապաքէն արհեստք և զիտութիւնք ամենայն ուրեք ծաւալեալ դասնին այժմիցս . ամենայն ազգ և ամենայն երկիր զնոցայն փութան զգեւոր յանձինս զլուսաւորութիւն . ևս Հայաստան մին յերեւել և ՚ի շրջ Հին թագաւորութեանց անտի՝ թող պէնսցիլ այսուհետեւ որպէս երբեմն ՚ի Հին ծաղկեալ դարս իւր՝ բազում ուսումնաւորք և խնամատէր անձամբք, որոց անժխտելի աւհաւատ չեայ կարէ լինել ճեմարանս այս :

Ահա այն ամենայն՝ զոր ինչ թելադրեաց մեզ հայրենասիրութիւնն ասել զկրթութենէ ողջամիտ դատողութեամբ : Ահա այն ամենայն գերազանցութիւնք, շահեկանութիւնք և բարիք, զորս դանձել ունի անձին մարդն ՚ի ձեռն բարի կրթութեան : Ապա մնայ այժմ մեզ զորոցս և ձեզ ընթերցողաց, զի ձօնեցուք զենկանուէր ողօթս առ ամենաբարձրեալն Աճ, որ շնորհօք մարդասիրութեան իւրոյ պահեալ ունի զմեզ մինչև յայս կէտ ասպարիկել մերումս կրթութեան . հեղցուք առաջի մեծի Կայսերն Ռուսաց և մերս Հայաստանի՝ դաստնաման գոհութիւն սրտի, որ տարածեալ ունի զթեւս խնամոյ իւրոյ ՚ի վերայ ազգայոյս ճեմարանիս . բացյուք զխորս սրտի մերոյ առաջի հանդուցեալ և կենդանի բարեբարոցս Լազարեանց, և յայտնեցուք նոցա զմերս զանազաւ երախտազիտութիւն և զկարողութիւն ՚ի Տեսանէ Աստուծոյ պարգևել նոցա զղորութիւն և զկարողութիւնս առ ՚ի լուսաւորել զեականութիւն միտս մեր . և ՚ի տրիտուր անկշռելի խնամոյ նոցա խոստացուք ոչ խնայել ինչ մեր ցիւրջին շունչ կենաց վասն ծաւալուն մերս սիրելի Հայրենեաց՝ Ազգի և Հասարակունի :

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ

՚ի Մոսկով կառուցեալ Տեարց Լազարեանց  
Հայկական Ղեմարանին արեւելեան լեզուաց:

Գ Լ ՈՒՒ ԱՌԱՋԻՆ .

Թորինուած, Նստատակ և հանրական Հիմունք .

§ 4 .

Տեարց Լազարեանց Հայկական Ղեմարանն Արեւելեան լեզուաց՝ Կառուցու  
որ գտանի ՚ի ներքոյ բարձրագոյն հովանաւորութեան կայսերն Ռուսիոյ Տէմարա  
սաց, կառուցեալ է ՚ի Մոսկով ՚ի ներգործական ներքին խորհրդաւն .  
կանէ ՚ի հրամանատարէ և յԱպետէ յիշխանապետէն Թովհաննու  
Եղիազարեան, և յեղբօրէ նորա յիշխանապետէն Թովակիմայ Եղիա  
զարեան Լազարեանց ՚ի 1816 ամի, և յապահովէ կայուցեալ յա  
պագայ ժամանակս տրովք երկուց եղբարցս այսոցիկ և ժառանգաց  
սոցին, որպիսի են մայր գումարն դրամաց, շինուածք և այլ կերտ  
ուածք պատկանեալք Ղեմարանիս . որոց վինն ըստ հասարակաց հաշ  
ուի տարածի ընդ ամենն յամի 1830 մինչ յինն հարիւր հազար ռուպլիս  
Յանմուաց յիշատակ բարեբարացն և վասն գերօրինակ օգտի հա  
սարակաց սխրագործութեան նոյա, ուսումնարանս այս ըստ բարձ  
րագոյն հաստատեալ օրագրոյն (Ժառանգ) ՚ի 1828 ամի մարտի ամ  
սոյ՝ Նախարարակոյտ Ժողովոյն (Ժողով) որ յազապս բարեկարգու  
թեան ուսումնական դպրոցաց, անուանի Տեարց Լազար  
եանց Հայկական Ղեմարան Արեւելեան Լեզուաց:

3



5443 6166  
A904

## § 2.

**Նպատակ**  
**Ճեմարանին** • Նպատակ ճեմարանին կայանայ յայնմ, զի առմատուոցէ մանկանց զամենայն կարեւոր միջոցս առ ՚ի կրթել և հրահանգել նոցա ՚ի գիտութիւնս, յորոց ձեռն կարասցեն պատրաստել զանձինս առ ՚ի մտանել յարքունի պաշտօնմունս թէ ՚ի զինուորական և թէ ՚ի քաղաքականս : Գլխաւոր նպատակս այս պարունակէ յինքեան զերկու այլ մասնաւորս . նախ՝ զտեսական և զգործնական ուսմունսն Արեւելեան լեզուաց առ ՚ի պատրաստել զթարգմանիչս ամենեւին հարկաւորս, ՚ի պատճառս կապակցութեանց՝ զոր ունի Տէրութիւնս այս ընդ այլոց ասիական տէրութեանց : Երկրորդ՝ արեւելեան ճեմարանս այս իբրեւ գլխաւոր կենդրոնեան տեղի ՚ի մէջ աղգին հայոց, յարաբերութեամբ առ այլ հայկական դպրոցս ցրուեալս ՚ի ռուսաստան, համարի Սերմիարան իմն առ ՚ի պատրաստել զուսուցիչս կամ զվարժապետս, որոց ամենայն ուրեք պէտս ունին այդպիսի դպրոցք . իսկ վասն քրիստոնէից հայկազնեայ Լուսաւորչակոն հաստատեցելոյ՝ պատրաստել զքաջուսումն պաշտօնեայս սրբոց Եկեղեցւոց : Բայց յայսմանէ՝ ճեմարանս ՚ի գործ դնէ զամենայն կարելի հնարս առ ընդարձակել զգիտութիւնս Արեւելեան լեզուաց և ՚ի քաղմացուցանել զտեղեկութիւնս զԼսիական ազգաց և զաշխարհաց :

## § 3.

**Օգուստ**  
**Ճեմարանին** • Մանկուք հայոց, որք բնակին ընդ հովանաւորութեամբ Տէրութեանն ռուսաց և ցույցանեն զճերմոհանդէն հպատակութիւն երկրորդական իւրեանց հայրենեաց՝ ընկալեալ զկրթութիւն յազգային կենդրոնեան դպրոցին, ՚ի սուղ ժամանակի կարեն ընտանեալ ընդ բնիկ աղգին ռուսաց : Ի հարաւակողմանս պիսպէս քաղաքաց Տէրութեանն և ՚ի նորոգ նուաճեալ դաւառացն Հայաստանի, ևսն յայլ հեռաւոր կողմանց, որքիք հայոց պիտի ժողովին ՚ի ռուսաստան : Պարտեզս այս գիտութեանց ունի յինքեան զսերմունս, յորոց վաճառականութիւնն և քաղաքական վարչութիւնք ընդ Լսիական ազգաց՝ կարեն հնձել զպտուղս իւրեանց : Որոչ պպացոյց կարէ լինել այն, զի յօրէ կառույման անտի ճեմարանին ՚ի 1816 ամէ մինչ ցայս 1830 ամ ՚ի միջոցս 14 ամաց՝ արձակեալ են աստի թուով



իբր 309 աշակերտք : Եւտ աւարտման ընթացից ուսման իւրեանց  
 'ի ճեմարանիս, 49 աշակերտք օրինաւոր հարցաքննութեամբ արժա-  
 նացեալ են կոչման փոքր և մեծ ուսումնասիրաց (սեփական) և գո-  
 րծաւոր մոսկովայ կայսերական համալսարանին : իսկ այլք մոտեալ  
 են 'ի բարձրագոյն և 'ի ղինտորական պաշտամունս, ոմանք ևս յանձ-  
 նատաճ գունդն կայսերական : Բաց յայսցանէ բազումք լեալ են  
 բարեկիրթ քաղաքացիք, և այլք 'ի զանազան զպրոցոյ են դասա-  
 տուք և տարածեն ղլուսաւորութիւն 'ի մէջ համազգեսաց իւրեանց  
 'ի զանազան քաղաքս Տէրութեան :

#### § 4 .

Ճեմարանս այս ըստ իւրուեջն վսեմական նպատակի, գործը առան Գլխաւոր  
 ձին իմն տեսակ իբր Արևելեան Ուսումնարան, կառուցեալ յօգուտ հաս-  
 տէրութեան և 'ի բարեբախտութիւն ողջոյն ազգի միոյ, լինելով (հասկանալի)  
 ընդ կայսերական բարձրագոյն հովանաւորութեամբ, զօրութեամբ  
 բարձրագոյն հրովարտակի տուելոյ 'ի մեծ կայսերէն յԱղէքսանդ-  
 րէ առաջնոյ 'ի 30 աւուր յունիսի 1825 ամի, կայր ընդ գլխաւոր  
 և անմիջական հոգատարութեամբ զօրագլխապետին (հեղինակ) թըն-  
 դանօթական զօրաց Կրաֆ Ալէքսէյ Անդրէասեան Արախէի . իսկ  
 այժմ ըստ զօրութեան բարձրագոյն պարզեւագրոյն ըստ վճռոյ ինք-  
 նակալ Կայսերն տուելոյ յանուն Նախարարին (սեփական) ազգա-  
 յին լուսաւորութեան 'ի 19 օգոստոսի 1827 ամի, ըստ օրինակի այ-  
 լոյ ուսումնական զպրոցաց գտանի 'ի ներքուստ ընդհանուր վերատես-  
 չութեան նոյն Նախարարին ազգային լուսաւորութեան . և ևս ըստ  
 բարձրագոյն հաստատեալ օրագրութեան նախարարակցոյ ժողովոյն  
 (սեփական) 'ի 1828 ամի, որ յաղաքս կարգադրութեան ուսումնական  
 զպրոցաց, յանձնեալ է գլխաւոր իշխանութեան Աջակցի Նորին  
 Կայսերական Մեծութեան զօրագլխապետին հեծեւազօրաց Աղէք-  
 սանդրու Քրիստափորեան Պէրէնտորֆի :

#### § 5 .

Ճեմարանս ունի զառանձինն հոգաբարձու 'ի տոհմէ հիմնադր-  
 րաց Տեառց Լալարեանց : Զպաշտօն և ղկոչումն հոգաբարձուի  
 կրէ այժմ յանձնին անդրանիկն 'ի ծնունդս Թովակիմայ Եղիսայ-  
 անի :

րեանց Պետական խորհրդականն (աբախէն առէնէն) և Ասպե-  
տըն Յովհաննէս Յովակիմեան Լաղարեանց . իսկ 'ի պակասիլ տոհ-  
մին Լաղարեանց ընկալցի զիտուֆն զայս մին 'ի մերձաւորացն տը-  
գականաց նոցա 'ի հայոց դաւանութենէ . եւ թէ աղբականք ևս պա-  
կասեցին երբէք, յայնժամ կարգեսցի Հոգաբարձու՝ ոմն յողբէն  
հայոց կամօք և ընտրողութեամբ վիճակաւոր Արքեպիսկոպոսին  
հայոց բնակելոց 'ի Ռուսաստան :

## § 6 .

Պաշտօնա- Ճեմարանս բաց 'ի Հոգաբարձուէն ունի ևս զԿառավարիչ (աբ-  
ախէն ճէմ- բէսբօբ) . զԿարգավար (աբսբօբ) . զԱ երատեսուչ (բնաբսբօբ) . զօրէնսու  
բնէն . սոյցս յեկեղեցական անձանց, զդաստոռս, զաւագ և զերտներ ուսու-  
ցիչս, զվերակայուս (աբաբիբաբէն), զհմուտ բժիշկ, զտնտես՝ որ միան-  
գամայն է զործադրող (էնէնո-աբօբ) . զատենադպիր, զճամբարակալ  
(պո-սալսբ) . զգատաբնինչ գրոց (շէնո-աբ) . և զկառավարիչ տպաբա-  
նին իւրոց :

## § 7 .

Թիւն դա- Ղաստառք 'ի Ճեմարանիս են աստիճանաւորք կայսերական Հա-  
աբախէնայ, մալսարանին մոսկովայ և այլոց Թագաւորական դպրոցաց . իսկ վա-  
նայոց սըն դաստառութեան հայկական Աստուածաբանութեան, Փիլի-  
սոփայութեան, Տրամաբանութեան, Հայկաբանութեան, և այլն ,  
պաշտօնա- զտանի 'ի Ճեմարանիս ծայրագոյն Միքայէլ Արքեպիստն Սալան-  
աբսբօբ, ճեմար- թեանց յաջորդն Մոսկովայ հայոց եկեղեցեաց, որ միանգամայն է  
ճեմար- ևս Կարգավար (աբսբօբ) բովանդակ առարկայից 'ի Ճեմարանիս, զոր-  
ճօնեայ Անդամ խորհրդարանին, և դատաբնինչ հայկական դրոց  
ճեմար- տպագրելոց 'ի Մոսկով : Բաց յայսմանէ Ճեմարանս 'ի գործ դնէ  
ճեմար- զամենայն կարևոր հնարս առ յաշակերտաց անտի ձառնաստելոց զիւր  
ճեմար- սեփհական ուսուցիչս, որք ըստ իւրեանցն ընդունակութեանց ըստ  
ճեմար- վճռելոյ խորհրդարանի և հոգաբարձուի՝ կարգին 'ի պաշտօն վար-  
ճեմար- ժապետի : Ասան աշակերտաց վարձեալ լինին ևս վերակացուք յա-  
ճեմար- լաղբեաց . այժմ բոլոր աստիճանաւորք յուսուֆիական մասին են  
ճեմար- թուով իբրև 22, և բաց 'ի սոցունց 'ի անտեսական մասին դտանին  
բաւական անձինք սպասաւորաց :

## § 8 .

Առաւելաբար ըստ մասին բարեկարգութեան թէ ներքին Եւրոպայի  
հանգամանայ և թէ ուսումնականին կամ թէ տնտեսականին՝ յանձն առնող  
նի վերահասութեան խորհրդարանի (սովետ) չորում հոգաբարձուն շահութեան  
ճեմարանի առաջին առնէ զառաջին անձն և է Լիթուական և ըստ  
նորին առաջագրութեանն ընտրեալ լինին անդամք խորհրդարանին ։  
Առաւելաբար ճեմարանիս, Կարգավարն, Աւերտեսուէն, երկուք  
յաւագ ուսուցչաց և երկուք ՚ի հրաւիրելոց ՚ի ճողաց անտի կամ  
յաղգականաց աշակերտաց, անուանին ներգործող Լիւդամք ։ Այսն  
բարեկարգութեան գործոց խորհրդարանին՝ կարգեալ լինի Լուե-  
նադպիր ոմն յաւագ ուսուցչաց և կամ ՚ի պաշտօնատարաց ճեմա-  
րանիս, ըստ սահմանելոց խորհրդարանին և հոգաբարձուի ։ Հա-  
մարտ նպատակի ճեմարանիս ընտրէ խորհրդարանն զպատուանուն  
և զներգործող անդամն յայնպիսի անձանց, որք զբաղխապէս դա-  
մարձակի յայսնի լեալ իցեն բանագիտութեամբ, ուսումնասիրու-  
թեամբ, հմտութեամբ յարեւելեան լեզուս, կամ ընծայաբերու-  
թեամբ յօգուտ այսր ճեմարանի ։

## § 9 .

Ծայրագոյն Պատրիարքն կամ Կաթողիկոսն ամենայն հայոց է Պատրիար-  
պատուանուն և առաջին Լիւդամ, վիճակաւոր Լիւթեպիսկոպոսն նոն (հո-  
հայոց Ռուսաստանի, Աւրաստանի, և Պետաքապիսի կն անիովիս շահութեան) ան-  
պատուանուն Լիւդամք ։ Ընտրելոց ՚ի պատուանուն և ՚ի ներգործող  
անդամն տուեալ լինին տպեալ վկայադիրք հանդերձ ստորագրու-  
թեամբ հոգաբարձուին և խորհրդարանի ։ Լիւդամքն համեմատ իր-  
ման իւրեանց պարտաւորութիւն դնեն անձանց հոգալ զօգուտ և  
զյառաջադիմութիւն ճեմարանի ։

## § 10 .

Հանրական պաշտօն խորհրդարանին է քննութիւն առնել վա-  
սէն ուսումնատուութեան ՚ի ճեմարանիս, կարգել զառարկայս յիւ-  
րաբանիւր դաստան, զեղանակն դասատուութեան, զմատենան, հանդի-  
սորս պարտին պարտալիլ աշակերտք, ըստ օրինակի այլոց ուսումնա-  
կան թաղաւորական դպրոցաց, ընդունել ընդ աշակերտս և կար-



գաղերէլ զԺամանակն տարեկան ուսման, սահմանել արձակելոց 'ի ճեմարանէս աշակերտաց զստիճանս, տնօրինել զլիտոցս վիճակի նոցա վկայագրութք և բաշխողութեամբ զանազան պորդեաց : Խորհրդարանին անկանի առնել զամենայն ընդհանուր տեսչութիւնս ըստ զանազան մասանց ճեմարանիս, հայթայթել զամենայն հարս առ 'ի պայծառացուցանել զայն, և 'ի գործ դնել զամենայն ճիւղն հարկից առ խախնել և 'ի բաց խլել անտի զամենայն օրինազանցութիւնս և զանկարգութիւնս : Յանձնի և ևս խորհրդարանին կատարելագործել զեղանակն դասաւորութեան աշակերտաց, զի թեթեւաբեռն յառաջադէմն լիցին նորա . նա ևս հոգալ ճիշտ պահպանել զըրբազան Բարոյականութիւն և զմաքրութիւն վարուց յանձնին աշակերտելոց :

## § 41 .

Ժողովուրդն  
ման խորհրդ-  
արանին .

Խորհրդարանն ժողովի միանգամ յեօթնեկի, կամ աւելի ևս եթէ հարկաւոր լիցի . իսկ 'ի բացակայութեան հոգաբարձուն ընդ նախագահութեամբ կառավարչին կամ երկրպագոյն անդամոց, առնէ վերահասութիւն ամենայն գործոց պատկանելոց ճեմարանիս :

Չընդհանուր և զմասնաւոր ժողովմանն վերատեսուչն և ատենադպիրն առնեն զօրագրութիւնս, որք յետ հաստատութեանն ածին 'ի լրուծն գործադրութեամբ : 'ի Ժամ բացակայութեան հոգաբարձուն՝ զԺողովմանէ Խորհրդարանի տուեալ լինինմ համառօտ բովանդակութիւն հանեալ յօրագրութեանց, որպէս զի նա հաստատեսցէ զայնս :

## § 42 .

Յաւաքե-  
լուրէնս  
հոգաբարձ-  
ուն առ  
բարձրագոյն  
մեծարար .

Հոգաբարձուն ընկալեալ 'ի կառավարչն զօրինեալն 'ի վերատեսչէ զմասական ծանօթութիւնս անցից, առաջի առնէ յայնցանէ յամենայն ամի բարձրագոյն մեծաւորաց՝ զընդհանուր հաշուէզիր վիճակէ ճեմարանիս և զնորանոր առաջադրութեանց, առ բարբառագոյն . և որ յառաջադիմութիւն ճեմարանիս հարկաւոր համարելոց :

## § 43 .

Որպիւր  
հոգաբարձ-  
ման կողմէն

'ի ճեմարանս յայս ընկալեալ լինին վասն բարեկրթութեան հոգաբարձման մանկունք ամենայն վիճակի հայոց, որք գտանին ընդ հովանաւորու-

Թեամբ տէրութեանն Ռուսաց, ևս և յայլոց ազգաց յաղնուակա- նայ և յաստիճանաւորաց . նոյնպէս թոյլ տուեալ լինի այլոց ազա- տավիճակ մանկանց աւսուել զուսուսն ի ճեմարանս : Հոնս հա-  
րէն հասնելն  
ճեմարանն .

§ 14 .

Ի ճեմարանս յայս մտանեն վասն ուսումնառութեան, նախ Զբնաւարժ, երեսուն կամ թէ աւելի՝ քառասուն մանկունք ի հայոց լուսաւոր- չակրօն դաւանութենէ . որոց տասունքն հարկաւ պարտին լինել որ- զիք աղքատ քահանայից կամ սարկաւազաց . և ինքեանք քահանայա- ցուք կամ վարդապետացուք . իսկ մնացեալքն որդիք աշխարհակա- նաց . սոքա ամենեքեան ձրի խնամին ծախիւք Բարերարաց ի կտա- կաւ աւանդեալ գումարէ գլումոյ անտի, և յայլոց եկամտից ճեմա- րանս : Թիւն ձրիաւարժ աշակերտաց կարէ աճել ըստ հանգամա- նաց ճեմարանս : Զնոսա ընտրէ խորհրդարանն ի թուոյ յառա- ջագոյն որոշելոյ ի տանէ աղքատ քահանայից, սարկաւազաց և չը- քաւորաց և յորբոյ, որք պարտին լինել առողջ մարմնով ըստ կազմ- ուածոյ անդամոց և ընդունակութեանց մտաց . յորոց ի հաստա- տութիւն պարտաւոր են ծնողք նոյին կամ ազգակիցք կանխաւ առա- ջի աւանդել ի խորհրդարան ճեմարանս զօրինաւոր վկայադիրս թէ յեկեղեցական և թէ ի քաղաքական կառավարութեանց տեղեացն կամ ի պատուաւոր անձանց հասարակութեանն քաղաքին ստորա- զրեալս : Զմտանել ձրիաւարժ աշակերտաց հաստատեն հոգաբար- ձուն և խորհրդարանն, և ըստ ծանուցանելոյ նոյին առաքին ման- կունք ի ճեմարանս յիւրում՝ նշանակեալ ժամանակի : Երկրորդ՝ ճեմարանս ընդունի զլիաթոշակ՝ զլիաթոշակ և զերթեկե աշա- կերտս յամենայն ազգաց, որք վասն միոյ կամ կէս տարւոյ յառաջագոյն տան զսահմանեալ չափաւոր թոշակն վասն ամենայն պիտոյից և հար- կաւորութեանց իւրեանց, առանց ամենայն բարձման կամ պակաս- ման հաշուին :

Ծանօթութիւն Թ . Թիւն ձրիաւարժ, լիաթոշակ և կիսա- թոշակ աշակերտաց ըստ տանելոյ բնակարանաց կարէ տարածիլ մինչ ի 100 և աւելի ևս ըստ անտեսութեան հոգաբարձուն և խորհր- դարանս : Բ . Զբնաւարժ և թոշակատու աշակերտք կայուցանեն զերկուս ինքնուրոյն երամս, որք զետեղին յառանձին սենեակս և

իւրաքանչիւր երամ ունի զիւրն առօրեայ վերակացու։ իսկ դաստառունքն, սենեակն դասակրկնութեան և սեղանատունն հասարակ են ամենեցուն։

## § 15 .

Մանկունք ընկալեալ լինին 'ի ճեմարանս 'ի 10 ամաց հասակէ մինչ 'ի 14, միանգամ 'ի տարւոջ 'ի սկիզբն տարեկան դաստասցու-  
թեանց։ 'ի մտանելն մատուցանեն 'ի խորհրդարանն զաղերսագիրս և զվկայականս Ծ) զմկրտութենէ . Ը) զծննդենէ և Գ) 'ի բժշկ-  
կէն Թէ արդարեւ հանեալ իցէ մանուկն զբնական և զպահպանողա-  
կան ծաղիկ։ 'ի նոր մտանողաց պահանջի զի գիտասցեն զնախա-  
դուռն զխտութիւնս 'ի քրիստոնէական վարդապետութեան, յըն-  
թերցանութեան, 'ի դրութեան և 'ի Թուաբանութեան։ Կորամուտ  
մանկունք կարեն մտանել 'ի միջին դասատունս ըստ հարցախորձու-  
թեան, զոր առնեն դասատուք 'ի ներկայութեան վերառեսչին։ Պարտ  
է կարգադրել այնպէս, զի աշակերտք նշանակեալք 'ի ստորին դա-  
ստոուն՝ չիցեն պակաս քան զտասնամեայ, յերկրորդն մեծասանա-  
մեայ, և այլն ըստ կարգի։

## § 16 .

Տասն ձրկալարժ աշակերտք ճեմարանիս, զինի աւարտման ուս-  
ման իւրեանց անպատճառ պարտաւոր են ըստ տնօրինելոյ հոգաբարձ-  
ուին և խորհրդարանին՝ մտանել 'ի հոգեւոր պաշտօն քահանայութեան  
կամ վարդապետութեան հայոց եկեղեցւոյ . իսկ այլքն ըստ զօրու-  
թեան կանոնաց Թաղաւորական դպրոցայ՝ ստանձնեն զպաշտօն ու-  
սուցչաց յայսմ ճեմարանի, կամ յայլ դպրոցս հայոց ուստաստանի,  
և ծառայեն անդ ըստ հասարակաց օրինաբրութեան՝ ոչ պակաս  
քան զամս վեց։

## § 17 .

Վառապարիւն է անընդմիջական մեծաւոր ճեմարանիս, որ վերա-  
հասնէ հասուն լինի ամենայն մասանց վառապարութեան։ Յայս կոչուին ընտ-  
րի նա 'ի հոգաբարձուէն, որ և առաջի առնէ զնա 'ի հաստատութիւն  
'ի բարձրագոյն մեծաւորաց։ Ընտրեալն յայս կոչուին ընդ գերազանց  
վարուցն մաքրութեան, պարտի ևս ունել զբաւական տեղեկութիւնս



յարհետո գիտութեանց, զի մանրաքննին կարացէ գտնել զընդու նսկութեանց և զդատատուութեանց ուսուցչաց, և գառաջադիմութենէ աշակերտաց: Կառավարին պարտաւոր է բանիւ կամ գրով աղդ առնել հոգաբարձուին զեւրից և զմտից իրաց ՚ի ճեմարանիս և զկարգադրութեանց:

Ծանօթութիւն. ՚ի ներկայ ժամանակիս Կառավարին է երկրորդ որդին հիմնադրին վեհազնեայ Յովակիմայ, Պետական խորհրդականն (Կոմիտէի անդամ է) և Ապետն Խաչատուր Յովակիմեան Լազարեանց, որ ծառայէ առանց թողակի ըստ յատուկ ջերմեանդութեան իւրոյ միայն յօգուտ ճեմարանիս:

#### § 18.

Աւերտեսուէն գոլով մերձաւորապէս օգնական կառավարին Աւերաւէ գտանի ընդ անխնայական իշխանութեամբ նորին: Աս պարտի լինել հմուտ յարհետո և ՚ի զանազան լեզուս, վսեմազոյն ՚ի վար կենաց, հաստատուն ՚ի քրիստոնէական կանոնս և զործակատար: Աս ուսուցչան է ցանկ ևս ՚ի ճեմարանի զգիտութիւնս ինչ, բայց ոչ խափանելով յայլոց պարտաւորութեանց իւրոց, և ընտրի ՚ի կառավարչէն, որ զեկուցանէ զնմանէ հոգաբարձուին առ ՚ի առաջարկել զնա ՚ի հաստատութիւն: Թէ երբէք պատահեցի բացակայիլ կամ հիւանդանալ կառավարչին, զտեղի նորա կալցէ վերատեսուէն:

#### § 19.

Կառավարին, վերատեսուէն, դատաւոր քրիստոնէական վար Աւերաւէ դասկետութեան, աւագ և կրտսեր ուսուցիչք, նմանապէս և աստիճանաւորք ըստ տնտեսական մասին՝ ընտրին ՚ի խորհրդարանէ հայեցեալ յընդունակութիւն իւրաքանչիւրոցն և հաստատին ՚ի հոգաբարձուին: Դոլին օրինակաւ վճարի և արձակումն աստիճանաւորաց ՚ի ճեմարանէս:

#### § 20.

՚ի պաշտօն վերակայութեան ընտրին անձինք փորձիւք ծանուցեալք ըստ վարուցն բարեբարոյութեան և լիացեալք հարկաւոր տեղեկութեամբք յարհետո և ՚ի գիտութիւնս, որք և զօրեսցեն ազատօրէն խօսել զաղղիացի կամ գերմանացի, կամ միով յարեւելեան

լեղուկաց անտի : Չ կնի կառավարչին և վերատեսչին՝ զլիաւոր պարտաւորութիւնք վասն բարեբարոյութեան վարուց իւրաքանչիւր աշակերտի՝ յանձն լինին վերակացուաց : Նոքա ՚ի պարտալ ժամանակս երբ ոչ զոյ դասատուութիւն, ևս և ՚ի ժամ՝ կրկնութեան և պատրաստութեան դասուց՝ անբաժան գտանին ընդ ձրիալարժ և թոշակատու աշակերտաց . ունին ընդ նոսա զհասարակաց սեղան կերակրոյ . ննջեն ընդ նոսա ՚ի միասին ՚ի մի և նոյն սենեակս ըստ աւօրեայ կարգապահութեան իւրեանց, և բարւոք քննեն զիւրաքանչիւր ընթացս և զգնացս նոցա : Աւերակացուք վարեն զօրական տոմարս զվարուց և ջանասիրութեանց որդեգրաց, յորմէ և յօրինեալ լինին շաբաթական յայտարարութիւնք վասն վերատեսչին, և յայնչանէ յօրինէ վերատեսչն զընդհանուր ծանօթութիւնս ՚ի պէտս կառավարչին և խորհրդարանի :

## § 21 .

Դիւանան . ՚ի պէտս տաճնադպրին և վասն կառավարման առ հասարակ ամեն ունի ճէմանայն համարակալական գործոց՝ ճեմարանս ունի զվիւանատուն, ըզբանին (անշահաւոր) . համարակալ և զԳրագիր : ՚ի դիւանատան յօրինին օրագրութիւնք թղթոց՝ որք առաքին անտի արտաքս և որ ընկալեալ լինին ՚ի ներքս . եւ համառօտաբար նշանակին յայնս բովանդակութիւնք իւրաքանչիւր թղթոց, թուահամարք սյնոցիկ, և օր՝ յորում ընկալեալ կամ առաքեալ լինին : Յայսմ իսկ դիւանատան պահպանի դիւանն գործոց և յուցակագիր նորին :


## § 22 .

Կարգուի . Տնտեսն (էփոսոս) ընդ տեսչութեամբ կառավարչին և վերատեսչին ունի ՚ի ձեռին զամենայն կալուածս ճեմարանիս . նա ևս ըստ արտաքին կառավարութեանն կատարէ նա զպաշտամունս գործադրի (էփոսոս) . նա պարտի դիտել հիմնաբար զամենայն ճշդութիւնս տնտեսական մասին : Ըրութիւնն, անշահասիրութիւնն և ջերմեւանութիւնն են զլիաւոր պարտաւորութիւնք նորա : Նա կարգի ՚ի խորհրդարանէ և գտանի ընդ նորայն իշխանութեամբ, ևս ընդ կառավարչին և վերատեսչին . ունի տալ պատասխանի զառձեռն պատրաստ դրամոյ, որք ծախին ՚ի պէտս սրաւորոյ և զայլ իրաց, որք

տուեալ լինին նմա և առեալ լինին ՚ի նմանէ կրկին յետս՝ ըստ ցուցակի և թուահամարոյ, իսկ առ բարեոք կառավարութիւն պաշտօնին տուեալ լինին նմա սահմանադրութիւնը ։

### § 23 .

՚ի Ճեմարանիս դտանի յառանձին տեղւոջ ինչ հիւանդանոց, <sup>Հիւանդանոց</sup> <sup>Զեմարան</sup> ընդ տեսչութեամբ հմուտ բժշկի, ուր և վասն հանապազօրեայ բաշխարդութեան հսկէ ՚ի վերայ հիւանդաց պաշտօնեայ ոմն (Գէյլաշէր) և տիկին մի, որ միանգամայն է վերակացու կտակելինաց ։ Զերկաւրաժամանակեայ յաւր Դճ դարմանին ՚ի հիւանդանոցիս, և յայտպիսի դիպուածս տուեալ լինի ծանօթութիւն ծնողաց կամ ազգականաց տկարացն ։



## Գ Լ ՈՒ Խ ԵՐ ԿՐ ՈՐ Դ .

Ուսումնական կառավարութիւն ։

### § 24 .

- Նւարկայք զխոնական դաստոռունց ՚ի Ճեմարանիս, են սորին <sup>Լեւոնյան</sup> <sup>Զեմարան</sup> ։
- 1 . Քրիստոնէական վարդապետութիւն ըստ հայոց և ըստ ռուսաց դասնութեան .
  - 2 . Բարդախան և քաղաքական գիտութիւնք, որք են, Խ Տրամաբանութիւն և Բարդաբանութիւն . ք Քաղաքական պատմութիւն և Վիճակագրիտութիւն (Խաղաքական) ։
  - 3 . Բնական և Չափաբերական գիտութիւնք (Քիմիո Եւ Բնական Գիտութիւնք) . որք են, Խ Թուաբանութիւն, Երկրաչափութիւն . Եւրանիկանչափութիւն և Նուկեարայ . ք Բնագիտութիւն (Քիմիո) և Բնական պատմութիւն ։
  - 4 . Բանասիրական գիտութիւնք, քի, Խ Բերականութիւն, Ճարտասանութիւն, Պատմութիւն, Նշխարհագրութիւն և Հնագնութիւն ։



- 5 . Լեզուք , նա Եւրոպականք , և ք Լսիականք , այն է ,  
 1 . Ուսուցաց . . . . 1 . Հայոց :  
 2 . Լատինացւոց . . . . 2 . Լրագրացւոց :  
 3 . Գաղղիացւոց . . . . 3 . Տառակաց :  
 4 . Գերմանացւոց . . . . 4 . Պարսից :  
 6 . Գեղեցիկ արուեստք , այն է , նա Սպեկուլատիւն , ք Պատ-  
 կերահանութիւն , ք Չեւաբուութիւն ( չեւաբուութիւն ) , ք Կարգա-  
 ( աստիճանութիւն ) , և ք Երաժշտութիւն ( Տոնաշար ) :

Ծանօթութիւն 3 . Յետոյցանել զգրիստոնէական վարդապե-  
 տութիւն և զեկեղեցական պատմութիւն գտանին երկու առանձին  
 դասակարգք , յորոց 'ի միում' քահանայ հայոց ուսուցանէ ըստ հա-  
 յաստանացոյ Եկեղեցւոյ զգրիստիւն հաւատոյ . իսկ 'ի միւսում' քա-  
 հանայ ոմն ուսուցաց վարժէ զթոշակատու մանկունս նոցա ըստ դաւա-  
 նութեան իւրեանց : Է . Յետոյցանական առարկայս՝ վասն թոշակա-  
 տու և կիսաթոշակ աշակերտաց յաւելցին նա և երաժշտութիւն և  
 զինավարժութիւն ( Գեղեցիկութիւն ) , միայն թէ ուրոյն վարժուք ճշո-  
 ղացն : Առ ուսումն այսոյ կրթութեանց ըստ սահմանելոյ խորհրդա-  
 րանին կարգաւորի տարբեր ժամանակ , յորժամ ազատ իցեն ուսա-  
 նողքն 'ի կարգաւորեալ դասաւորութեանց . իսկ վճար դրամոցն 'ի  
 պատճառս առանձին առարկայից , ըստ տնօրինելոյ խորհրդարանին  
 դնայ յօգուտ վարժապետաց ըստ չափու նոցին սեփական աշխատանաց :

### § 25 .

Ժամանակ  
 ուսմանց .

Ուսումնաւորութիւնն 'ի ճեմարանիս յընթացս բոլոր տարւոցն  
 տեւէ դամիս մետասան , իսկ յուլիս ամիսն ըստ հասարակաց որոշման  
 նշանակի 'ի հանգիստ աշակերտաց : Բայց յաւուրց կիրակիէից և 'ի  
 ցուցականշան հանգիստաւոր տօնից , յամենայն աւուր շարունակի դա-  
 տաւորութիւն ուսմանց . յառաւօտու յութեւորդ ժամէ մինչև ցեր-  
 կոտասան ժամն , և զկնի ճաշու յերկրորդէ մինչև ցիկեցերորդն :

Ծանօթութիւն 4 . 'ի կիսոյ մայիս ամսոյն ցմին յուլիսի թոյլ տու-  
 եալ լինի կարգել զժամն դասասացութեան , յառաւօտուն յութեան-  
 րորդ ժամէ ցմետասանն , և զկնի ճաշուն յերկրորդէ ցեփեմբեր ժամն :

### § 26 .

Երեւոյ 48 Ընթացք գիտնական ուսմանց 'ի ճեմարանիս բաժանի 'ի չորս

դասակարգս . այն է , 'ի վերին , 'ի միջին , յըստորին և 'ի պատրաստակա-  
տական : Կատարեալ ընթացք գիտութեանց՝ ըստ յատկութեանց ուս-  
մունքական առարկայի՝ աստիճանաւ 'ի ճեմարանիս աւանդելոյ , շա-  
րունակի գրէթէ՝ զամս իբրև եօթն , որպէս ստորև յառաջին յա-  
րադրութեան՝ որ յազգս ուսումնական կարգադրութեան , բայց-  
որոշ նշանակի . այն ինքն է , զի յառաջին պատրաստական դաստա-  
ն ուսումն ձգեսցի զամս 2 . յերկրորդ դաստառն նոյնպէս զամս 2 . յեր-  
րորդ դաստառն զամս երկու . իսկ 'ի չորրորդ 'ի բարձր դաստառն  
մի ամ միայն : Սակայն յայսմ ամենայնի մեծաւորք ճեմարանիս ան-  
րիննն ըստ չափոյ յառաջադիմութեան և ընդունակուե ուսանողաց :

### § 27 .

Առաջին խորիսն ուսումնական դպրութեանց և բարեկարգու-  
թեանց 'ի ճեմարանիս է ուսումն սուրբ հաւատոյ և վարույ : Ա-  
մանկուսն ստորին դասուց յաւելցի ծանր և առաւել մտադրութիւն  
առ 'ի զարգացուցանել զթարմ յիշողութիւնս դեռալարժ մանկանց  
հարկաւոր ճանաչմամբք լեզուաց առ 'ի պէտս արագայ ընթացից  
գիտութեանց : 'ի միջին դասակարգի յարեսցին յայն նա և բա-  
նասիրական և պատմաբանական գիտութիւնք : Իսկ կերպաւորել  
զըստողութիւնն բարոյական , կենցաղագիտական , բնաբանական և  
չափաբերական հմտութեամբք , լիցի գլխաւոր նպատակ աշակերտաց  
վերին դասակարգի :

### § 28 .

Առ 'ի կարգադրել զժամս վասն այլալատիս առարկայից գի-  
տութեանց և լեզուաց , 'ի կիր արկանին կանոնք , որ պարունակին  
'ի հասարակ կարգադրութիւնս անդ ուսումնասիրական դպրոցաց : Ա-  
ռաւարդութիւն ճեմարանիս , կըռելով զօգուտ և զհարկ պահանջմանց ,  
միանգամ 'ի տարւոջ առնէ գհշտրնկալ և զհարկաւոր վտօլխմունս  
'ի ժամագրութիւնս ուսմանց : Աստանօր նշանակին 'ի կարգս ժա-  
մուց հասարակ կանոնքս , որք են , Զարթուցեալ աշակերտաց 'ի քնոյ  
'ի հինգերորդ կամ 'ի հինգերորդ և կէս ժամու առաւօտեան , 'ի  
վեցերորդն պարտին ամենեքեան դտանիլ զգեստաւորեալ և կալ միա-  
բան յաղթս : Եօթներորդ ժամս սահմանի 'ի կրկնել զդասաւանդ

և յուսել զնախաճաշիկ : Եւթերորդ. ժամէ մինչև ցերկոտասանն անընդհատ շարունակին ուսումնատուութիւնք 'ի դասատունս : Երկրորդ ժամէ մինչև ցերկորդն սահմանի ճաշկերոյթ, հանգիստ, զբօսանք և խաղացք, նա և պատրաստութիւն դասուց : Երկրորդ ժամէ ցլեցերորդն անընդհատ աւանդի ուսումն 'ի դասատունս : 'ի վեցերորդ ժամու տուեալ լինի նախընթերիք, հանդիստ և զբօսանք : Եւթներորդ ժամու կրկնութիւն դասուց : Եւթերորդ ժամու, ընթերիք, և յետ ընթերեաց երեկոյեան տղօթք : Քուն մանանց ձգի ժամս 'ի բր 8 . 5ր յիններորդ ժամէ երեկոյին ցճինդեւորդն առաւօտեան :

## § 29 .

Դասատուութիւն արեւելեան լեզուաց՝ որպէս զի լեյի լիակատար, սահմանեալ լինի ըստ չափոյ հարկին պահանջման յայնմ ժամանակի, յորժամ աշակերտք ցուցեալ արդէն զիւրեանց յառաջագիւմութիւն, հուպ լինին 'ի վախճան ընթացից գիտութեանց և լեզուաց : Կարգադրութիւն այսր կախի զվերահասութենէ մեծաւորաց ճեմարանիս :

## § 30 .

Հայկական լեզուն աւանդի ընդարձակ ամենայն տարածութեամբ և բովանդակութեամբ իւրով ըստ որում սեփական և բնածին է հայկազանց : Ընթացք և լրումն հայկական ուսմանց այսպէս բովանդակի 'ի բառեակ դասատունս ճեմարանիս :

## Առաջին պարբերական դասարանն :

Ատոնոր ուսանիլին մանկունք նախ՝ զհամառօտ հրահանգս քրիստոնէական վարդապետութեան ըստ դասանութեան սրբոյ Եկեղեցւոյ հայոց, 'ի մատենէն զոր Կարգավար ճեմարանիս ունի յօրինեալ 'ի պէտս աշակերտաց : Երկրորդ՝ անթերի մտառութեամբ ուսանիլին զառաջին մասն նոր քերականութեան, քաջ իմանալով զգնչութիւն և զօրակութիւն ութ տեսակ բառից, զճոլովմունս զլծորդութիւն և զխոնարհմունս նոյլն և զայլ ամենայն պարագայս, նոյն և ուսոյլն զանախալ առողանութիւն, և զբառապննութիւն . զանսովոր բառս հայոց մեկնեսցեն նշանակութեամբ ռուսաց կամ



աշխարհիկ լեզուաւ . յաւուրն զերիս խրթին բառս մեր սերտեցեն  
 'ի միտս թարգմանուիւ և նշանակուիւ այլոյ ինչ լեզուի՝ որում ծա-  
 նօթ իցեն . ընթերցցին զընտիր մատեանս նախնեաց . ժամս ինչ խօ-  
 սեցցին 'ի զրոյ բարբառ . միով բանիւ, վարեցցին ըստ կանոնայն՝  
 որ տպեալ կան 'ի նոր քերականութեանդ 'ի տնահամարսն 277—285 :

### ԵՐԵՎԱՆԻ ԿԱՌԱՐԱՐՆԷՆ :

Ուսանիցին մանկունք և արկցեն 'ի բերան զերկրորդ մասն քրիս-  
 տոնէական վարդապետութեան, զոր քահանայն մեկնեցէ նոցա ճա-  
 ուրջն աշխարհաբառ լեզուաւ, որպէս զի ոչ զնիւթական բառս մի-  
 այն, այլ և զիմաստս և զնշանակութիւն զրելոյն քաջ 'ի միտ առ-  
 ցին մանկունք : Նոյնպէս ևս ընթերցցին և մեկնեցէ քահանայն ման-  
 կանց զսուրբ Աւետարանն, յորմէ և քաղեսցէ զլճական համառօտ  
 տունս բանից վերաբերեալս առ հաւատս և մաքուր վարս, զորս և  
 տացէ մանկանց 'ի բերան արկանել : Նոյնպէս ուսցին անխալ ըզ-  
 բովանդակ զերկրորդ մասն քերականութեան մերոյ, ոչ միայն հա-  
 յեցողական, այլ և զործադիր ճանաչմամբ իւրաքանչիւր կանոնաց .  
 զորոյ և զօրինակս ինքեանք նորաք յօրինեցցեն անխալ . ուսցին ևս  
 զվերլուծութիւն խրթին շարադրութեանց նախնեաց յընտիր մա-  
 տենից նոցա . զարձակ և զոտանաւոր բանս միջինս պարզեցցեն ըստ  
 իմաստեցին . ընտելացցին առնուել զճաշակ զեղեցկութեան խօսից, և  
 առնել զարդար ընտրողութիւն պէտպէս տեսակաց շարադրութեանց,  
 այնպէս զի յարձակիլ մանկանց աստի՝ 'ի շարադրածս նոցա մի՛ դոյցի  
 ամենեւին սխալանք ինչ ընդդէմ քերականական կանոնաց, այլ  
 ժառանգեալ իցին զարուեստն քերթողութեան : Արժեցցին և ևս  
 'ի թարգմանել զպարբերութիւնս ինչ 'ի ռուսաց 'ի հայ լեզու ճիշդ  
 փոխելով զբառս և զհաստուածս բանից ըստ իմաստից համաձայն մա-  
 քուր կանոնաց հայկաբանութեան . բայց արժուն լիցի դասատուն  
 զի մի՛ ոճք և եղանակք խօսից ռուսաց կամ այլոց լեզուաց անզգու-  
 շութեամբ սարգեացին 'ի մերս գրականութիւն, որպէս յաճախ տե-  
 ասնի 'ի գրուածս վարժելոց 'ի դպրոցս այլեայլ քաղաքաց :

Յօրինեցցեն ևս մանկունք զպէտպէս աղգս նամակաց անխալ  
 կանոնօք ըստ այլեայլ աստիճանի անձանց . որպէս առ վաճառականս,  
 առ իշխանս, առ ծնօղս, առ եկեղեցական անձինս, և այլն : Զհետ

լիցին ևս հետ զհետէ խօսիլ զբաբառ լեզուաւ 'ի դասատան և այլուր, զի գիրքեսցի նոցա բարբառն գրոց :

### Երրորդ գլուխն :

Յայսմ վայրի ուսուցէ մանկանց վարժապետն զՊարտասանութիւն լեզուիս, ոչ զհայեցողականն միայն, այլ և զբուն գործնականն, որպէս զի աշակերտք մարթասցին յօրինել զպէսպէս ձևս, զպարբերութիւն և զճառս ըստ այլևայլ տեսակաց, եկեղեցական՝ դպրոցական և քաղաքական ոճով : Վարժեսցին ևս բայախօսել յատենի զճառադրեալսն՝ քաջակցել շարժութեամբ անդամոյ և յատակ առդանութեամբ ըստ կանոնաց ճարտասանութեան յօրինելոյ 'ի Արքայաւարէ ճեմարանիս : Եւ յաշխարհամանեսցեն 'ի հայկականէն 'ի ուսաց և յայլ բարբառ զերեսնց կամ զնախնեաց շարադրածս, զորս դաստառն ուղղագրեսցէ : Նոյնպէս աստ ուսցին աշակերտք և զհայկական Բանաստեղծութիւն, զպատմութիւն Գրականութեան հացոյ 'ի նախնեաց և այսր, ևս և զքաղաքական պատմութիւն ազգի և թաղաւորութեան մերոյ, զի ունիցին զլիակատար ծանօթութիւն ամենայն դպրոցական և քաղաքական անցից ազգիս 'ի սկզբանէ մինչև յայժմ : Քահանայն հացոյ յայսմ դասատան ուսուցէ զբաբառն պատմութիւն Աստուածաշունչ մատենից, տարբացեցեալ 'ի սիրտս մանկանց զյարգութիւն սուրբ հաւատոյ և զկրօնի և զեկեղեցւոյ մերոյ : Եւ ուսուցէ նոցա զբովանդակութիւն հաւատարեաց ըստ հայաստանեայց եկեղեցւոյ, և զտարբերութիւն մերս դաւանութեան յայլոց եկեղեցեաց յինչ ինչ նիւթս հաւատոյ և ծխից : պարզաբանեսցէ ևս նոցա զբաբառն ծէսս և զխորհուրդս սրբոյ Պատարագին, և զայլ կարևորս առ ճշմարիտ Աստուածպաշտութիւն ըստ քրիստոնէական պարտաւորութեանց :

### Չորրորդ գլուխն :

Հայկական ուսմունք այսր դասատան են, նախ՝ սրբազան Աստուածաբանութիւն թէ տեսականն և թէ բարոյականն, որ կարևորէ յոյժ մանկանց առ տպաւորելոյ 'ի հոգիս նոցա զճշմարիտ և զուղիղ Աստուածպաշտութիւն, զարդար անձնասիրութիւն, զանկեղծաւոր եղբայրսիրութիւն, և զարկնաղոհ հայրենասիրութիւն : Եւրկորդ՝ պատմութիւն եկեղեցւոյն Քրիստոսի : հանրական՝ որ զա-

մենայն եկեղեցեաց ճառէ • և մասնական՝ որ զմերս հայաստանեաց  
եկեղեցւոյ զգլխաւոր անցս և զփոփոխութիւնս պատմէ : Երբորդ՝  
Տրամաբանութիւն հայկական ըստ նոր հեղինակաց ճիշդ զննու-  
թեամբ • 'ի լուսաւորել զմիտս առ ուղիղ դասելոյ 'ի գիւտ ճշմար-  
տութեան յամենայնի : Զորբորդ՝ Գեղադիտութիւն (Aesthetica էս-  
էթէթիկա) որ ուսուցանէ ճանաչել զգեղեցիկութիւն իրական և մտա-  
ւոր էական, և ճաշակել կամ զգածիլ իմացական բերկրութեամբ  
'ի գեղեցիկութենէ արարածոց 'ի բնական և յարուեստական կարգի  
կենդանի ճաշակաւորութեամբ : Հինգերորդ՝ Հոգեբանութիւն (Psy-  
chologia փիլիօլոգիա) որով բացեալ լինի միտք և դատողութիւն ման-  
կանց առ քաջ ճանաչել զգինչութիւն և զնեղործութիւնս բանա-  
կան հոգւոյ և մտայ՝ 'ի կատարելագործել զայնս և յուղիղ վարիլ  
նորք 'ի բովանդակ կեանս : Զան դիցեն աշակերտք անթերի շտե-  
մարանել 'ի հոգիս իւրեանց զայս ամենայն գիտութիւնս, որպէս զի  
ըստ կարի կատարելագործեալք 'ի դոսին՝ մարթացին և ինքեանք  
ուսուցիչն լինել ուսումնական օրտ մանկանց ազգիս յայլ և այլ քաղաքս,  
որով օր քան զօր լուսաւորեսցի ազգ մեր և եկեղեցի 'ի փառս Արարչին :

Իսկ դաստոտութիւն այլոց երկից արեւելեան լեզուաց,  
Արաբացւոց, Պարսկաց և Տաճկաց, լիցի գործնական զոգչ ընդ  
բացատրութեան տեսականին : Հարկ է նախ սկսանել յարաբացւոց  
լեզուէն, որ սկիզբն և հիմն է երկուց այլոցն : յետ երկուց ամաց  
անցելոց 'ի մարզութիւն լեզուին արաբացւոց՝ պարտ է ձեռնարկել  
'ի պարսկական դպրութիւն, զորոյ զինի յանցանել միոյ տարւոյ 'ի  
տաճկականն պարապել 'ի բարբառ, սկիզբն առնելով 'ի քերականու-  
թենէ և շարունակելով լոյսթերցումն նշանաւոր հեղինակաց, 'ի խօ-  
սակցութիւնս և 'ի շարագրածս : Սոյն այս դասատոտութիւն բովան-  
դակէ յինքեան զպատմութիւն՝ զաշխարհագրութիւն և զգրականու-  
թիւնս Արաբացւոց, Պարսից և Տաճկաց :

### § 31

Հրահանդիլ յարեւելեան լեզուս 'ի սակս հեշտագոյն լինելոյ Ոսմանի  
սկսանի 'ի մատող տիոց անտի ուսանողացն : Զբիւավարժ աշակերտք արեւելեան  
ուսանին զարեւելեան լեզուս ըստ վճռելոյ կառավարութեան ճեման լեզուաց :



Ըմանիս հայեցեալ 'ի կարողութիւն և յրնդունակութիւն նորին :

§ 32 .

Մեր լեզուի համարելագործությունը կարի զուսմունքն արևելեան լեզուաց կարևորաց պետությունն Ռուսաց, օգտակար ճանաչի, զի ամենայն որդեգիրը, որը ընտրեալքն նուիրել զանձինս լեզուաց, յառաջին և ՚ի սորին դաստառնէ անտի սկիզն արասցեն մարդը զանձինս ՚ի բարբառ հայկական ։ Յերրորդ և ՚ի չորրորդ դասակարգից՝ թեթևացեալքն ՚ի գերմանական ռամանց սկիզն արացեն պարսպել լեզուն արբանացոց, պարսից և տաճկաց ։ Բայց առաջ լեռնելոյ լայլոյ գիտութեանց ։

§ 33 .

Ի սակա դատաւորութեան արեւելեան լեզուաց կարգեալ գտա-  
լեանն արեւել  
նին քաջալորած և քաջահմուտ ուսողիցք: Իսկ Վի գործնական կրթու-  
թեանն ևս  
թեանն ևս  
թեանն ևս  
Ի սորինուածս կարգին վարժապետք Ի բնա-  
ծնունդ ամսականաց, և առ Ի արդարաբանել զարարական կանոնս  
և զգերազանց հեղինակս, նոյն և առ ուսուցանելու զամիսին արդաց  
զսլաւմութիւնս կարգեալ շինի հասուն լեզուադէտ արեւելեան աղագոյ

## § 374 •

Ոչ պահանջել յառնան յն իւրաւան, թողեալ զգերմանականն, բայց օտարանալ ՚ի լատինականէն ոչ եռմէք արժան: ՚ի մի խորհուրդ ձայնակից լիցին կառավարին և վերատեսուչն, զի նորա՝ որ զանց առնեն պարապել յաւելեալս լեզուս՝ անցուցեն զպարապող ժաման ՚ի կըթուլթիւնս այլոց գիտական առարկայից, մանաւանդ զաղղիական և գերմանական լեզուաց: ՚ի վերայ այսր ամենայնի թոշակաւորք ըստ իւրեանց ընդունակութեան՝ կարողութեան և ըստ հաճողից նոյնի ծնողաց և մերձաւորաց, կարեն յձառլ ճեմարանին կառավարութեան ընտրել անձանց զլեզու ինչ արեւելեան, բայց սակաւ և յայլ ամենայն գիտութիւնս գուն գործեսցեն լինել կատարեալ:

§ 35 .

2nd Lt.

Զգիտութիւնս զամենայն բաց 'ի հայկականաց՝ պարտ է ուսու-

ցանեւ ռուսաց բարբառով, իսկ զլեզունս՝ եւրոպացւոց և ասիացւոց։  
միայն թէ դաստոռութիւնն բացատրեսցի ամենայն տեղեկութեամբ  
ռուսական և զաղղլական մեկնաբանութեամբք։

§ 36 .

Գլխաւոր նպատակ ռումանց հիշիւ յայսմ, զի զարթնուցու և  
կերպաւորեսցի ընդունակութիւնն տղայոց, վասն որոց չեն բաւական  
բնաւ լոկ մեկնաբանութիւնք, այլ կարեւորագոյն է զարթուցանել  
և սև զսեփհական ներգործութիւնս մտաց ռումանոցաց . բռնաբարել  
զնոցն իսկ զաշակերտս ՚ի դատել . տալ նոցա անդրադառնալ մտօք  
վերստին ՚ի միևնոյն նիւթ . հոսկ ապա իբրև մի առ մի և պարզ իմա-  
նան զառաջարկեալ մասն, յայնժամ ծանօթացուցանել զնոսս  
զհետ եկելոյն։

§ 37 .

՚ի պէտս բարեկրօն հայկասերունդ որդեգրաց, որք ըստ ընտ-  
րանայ կառավարութեան ճեմարանիս հարկաւ նուիրել ունին զան-  
ձինս յեկեղեցական վիճակ, կորցագորի առանձին դաստոռութիւն  
առ ՚ի կատարելագործել զնոսս յԱտուծաբանական զիտութիւնս և  
յեկեղեցական գրականութիւնս։ Սոյն այս դաստոռութիւն պա-  
րունակէ յինքեան զլիալի ընթացս տեսական և բարոյական Ատ-  
ուծաբանութեան, որպէս ցուցան ՚ի վերոյ, զմեկնաբանութիւն սըր-  
բալան տառից, զբացատրութիւն արարողութեանց սըբոյ Պատու-  
րագին և զեկեղեցական պատմութիւն։ Բայ յասացելոյդ հարկ է  
տարբացուցանել ՚ի սիրտս որդեգրաց զսրբալան արարողութիւնս  
ճեմարիտ եկեղեցական հովուի առ իւրն աստիճան արժանաւորու-  
թեան և առ դասս հասարակ ժողովրդոց, նո և հաղորդեսցին նոցա  
բացայայտ կանոնք բարի օրինակաւ շինելոյ զընկերս՝ զորոց զհոգս  
հոգւոց ունին ստանձնել, առ ՚ի ստանալ զտէր և զվստահութիւն ժո-  
ղովրդոց և նովն արմատացուցանել ՚ի հոգեւորական արօտս զկանոնս  
ուղղափառ հաւատոյ և զբարոյականութեան։

§ 38 .

Զրիավարժ աշակերտք ճեմարանիս՝ յետ վճարելոյ զընթացս Պատու-  
ռուման՝ ըստ բնաձիր ընդունակութեան և ըստ բարոյականութեան

վարժապետ  
հասցէ :

վարուց, ըստ սահմանելոյ խորհրդարանին կարգեալ լինին յառժա-  
մանակեաց դասատուութեան պաշտօն, որք և պարտին առաջնորդ ան-  
ձանց ունել զսահմանադրեալ կանոնան. յոյր սակս առ ՚ի հաղորդել  
նոցա զգործնական գիտութիւնս զկարեւորս բարեկիրթ դասատու-  
ուաց, և առ կատարելագործելոյ զնոսա ՚ի դաստիարակական պաշ-  
տօնի, կառավարութիւն ճեմարանիս կանխաւ վիճակաւորէ զնոսա ՚ի  
վարժապետութիւն ՚ի ստորին դասատուինս ուսուցնարանիս :

### § 39 .

Դասա-  
տու, վէ-  
ճանորդ,  
սեբէ և  
էրկտոն-  
էրկտոն :

Երկու են դասք վարժապետաց գիտութեանց և լեզուաց, յո-  
րոց յառաջին կարգի են երէց դասատուք, իսկ յերկրորդումս կըք-  
սերք : Երկուք են, 1 վարժապետն Աստուածաբանութեան և  
քրիստոնէական վարդապետութեան . 2 ուսուցչք բանասիրական  
գիտութեանց . 3 բարոյական և քաղաքական գիտութեանց . 4 բնա-  
բանական և չափաբերական կրթութեանց, և 5 ամենայն արեւե-  
լեան լեզուաց : Արեւք են ուսուցչք ստորին և նախապատրաստիչ  
դասատանց ևս և դասատուք արուեստից :

Ծանօթութիւն . Յանցանել ինչ ժամանակի մարթէ յաւե-  
լուլ զթիւ վարժապետաց, վերակացուաց և այլոց աստիճանաւորաց.  
կշռելով զյարմարութիւն և զչափ առթիւ հետ զհետէ նորոգ ծագե-  
լոց . որ կախի զնեքին տրամադրութենէ կառավարութեան ճեմա-  
րանիս : Դասատուութիւնն ՚ի միջի վարժապետաց բաժանի յաջորդ  
օրինակաւ . 1 և 2 ուսուցանեն զԱստուածաբանութիւն, զքրիս-  
տոնէական վարդապետութիւն Հայոց և Ռուսաց դաւանութեան .  
զտրբազան և զեկեղեցական Պատմութիւն . 3 զՏրամաբանութիւն,  
զՊարտաբանութիւն և զԳրականութիւն Ռուսաց . 4 զքերականու-  
թիւն Ռուսաց և զաշխարհագրութիւն . 5 զպատմութիւն և զվե-  
ճակագիտութիւն, 6 զչափաբերութիւն և զբնաբանութիւն . 7 զլե-  
զու հայոց . 8 զլատինաց . 9 զգաղղիացուց . 10 զգերմանացուց . 11  
զարաբացուց՝ զտաճկաց և զպարսից . 12 զպատեկաբահանութիւն .  
զձեւագծութիւն և զվայելչագրութիւն :

### § 40 .

Մասնաւ,

Յիւրաքանչիւր դասատան գիտութեամբ վերատեսչին պարտ է



գտանիլ մատենի, յորում ամենայն դասատուք 'ի վախճանի իւրեանց յորում ցուց  
դասատուութեանց նշանակեն զգերազանցեալսն 'ի բարեբարոյութեան  
թեան և 'ի յառաջադիմութեան, նոյնպէս ծանուցանեն զօրինա-  
զանցս և զպարճանս աշակերտաց, նոյն և զանսովոր ինչ զիպուածս, ինչ և  
և ապա սեփհական ձեռամբ հատուցանեն զայն առօրեայ վերակացունս։

#### § 41 .

Պարտէ վերատեսչին զօր ամենայն յայց ելանել անգամ առ ան-  
գամ դասատուաց, և ամենայն զգուշութեամբ գիտել, զի իւրաքան-  
չիւր ուսուցիչ ըստ սովորութեան կարգի շարունակելով զդաստու-  
ութիւնս իւրեանց, անորդհատ վերադիւնեացեն զընթացս սեփհական  
առարկայից, և առ հասարակ ամենայն ուսմունք 'ի ժամանակի և 'ի  
կարգի պահեսցեն զնախասահմանեալ կանոնս . մտադրել լինի ևս նա  
գործոց դասատուաց և վերակացուաց, ևս և կենցաղաւարութեանց՝  
բարուց՝ յառաջադիմութեան և կենակցութեան ուսանողաց։ Ուղ-  
ղեսցէ վերատեսչուն զպակասութիւնս և տայց պահպանել զկարգ  
յառնային . լրտեսեսցէ ևս նա, զի մի լինի երբէք վարժապետաց 'ի  
պատճառս կողմնապահութեան իմիք՝ նախամեծարութեամբ պատա-  
ղիւ ընդ ոմանս աշակերտաց, այլ տայի առանձին իմն մտադրու-  
թիւն նոցա, որք 'ի սակս այլեայլ պատճառաց սակաւ կամ ոչնչ  
ցուցանեն զյառաջադիմութիւնս։

#### § 42 .

'ի դիպուածս հիւանդութեան կամ բացակայութեան դասա-  
տուի ուրուք՝ յանձն առնէ վերատեսչուն զպաշտօն նորա այլում . Կո-  
խիկ եթէ հարկ լինի ինքն պարտաւորի զայն կատարել։ Նա որ օր-  
նաւոր պատճառաւ գտանի բացակայ, պարտապան է 'ի դէպ ժամու-  
ծանուցանել զայն վերատեսչին, զի ևս նա կարացցէ հոգ տանիլ այնմ  
կանուխ։ Հասարակապէս ամենայն վարժապետաց պէտք են ճշդիւ  
կատարել զպարտաւորութիւնս իւրեանց, ոչ յամբանալով երբէք  
'ի պայմանեալ դասատուութեան ժամուց, եղելոց անդ 'ի ցուցակիւ  
'ի յօրագրութեան գտանի որիչ իմն ամադիր, յորում նշանակի  
թիւ երբ քայ և երբ ելանէ իւրաքանչիւր դասատու 'ի դասատու-  
նէն, իսկ վասն անհրաման բացակայութեան վարժապետաց նախա-

գրեալ է արդէն 'ի բայ քառնալ 'ի թռչակէ նոցա առանց զըկանաց ըստ չափոյ կորուսեալ ժամանակի, զորմէ նոյն հետայն տուեալ լինի ծանօթութիւն կառավարութեան : Բայ յայսմանէ ամենայն վարժապետք թէ՛ երկրունք և թէ՛ կրտսերք, նոյնպէս և վերականգնութեան պարտաւորութեանց իւրեանց, պարտական են անխափան 'ի գլուխ հանել զայն ամենայն, որ ինչ միանգամ եղեալ կայ յընդհանուր կարգադրութեան անդ յաղագս կրթարանաց, 'ի կանոնս ուսումնասիրական դպրոցաց, և 'ի նախադրութեան ուսուցչաց տպելոյ յամի Տեառն 1789 և ապա կատարելագործելոյ, և վերաբերի ուղղակի առ պարտաւորութիւնս վարժապետաց և վերականգնուց :

## § 43 .

Պարտաւորութիւնս  
ստորին, 1 կերպուածորեւ  
զմիտս և զսիրտ ուսումնական  
պատանեկաց 'ի նոցայն անձնապատաս  
ան եղելոյ 'ի բարեկիրթ խրատաբողութիւնս .  
2 պարտաւոր են նոքա խոհեմամտութեամբ  
աղբէլ յողիս աշակեր  
տաց, թէ՛ դասասացութիւն նոցա է իբրեւ  
ուղեցոյց իմն ներածութիւն,  
իսկ դքս ճամբութիւնս գիտութեանց  
նչինչ այլով իւրք,  
բայց եթէ սեփական քրտամբք  
հանապաղօրեայ աշխատանց ու  
նին դանձել անձանց : 3 նկատելով  
դհասակ ուսանողաց՝ զայդ ներա  
ծութիւն մտրթ է բաժանել յերկուս  
աստիճանս . աշակերտաց 'ի  
կարգս ստորին դասուց եղելոյ  
պարտի վարժապետն մեկնաբանել  
զամենայն ինչ գիւրիմաց ոճով և  
յաճախ կրկնելով գնոյն բացա  
յայտութիւն . բայց և յայնմ ջան  
գելոյ հարցմունս և առաջարկութիւնս  
առնելով քաջ վարժել զմանկունս  
'ի դատել և 'ի կըր  
տել իւրեանց բանական իմաստիւք .  
իսկ 'ի վերին դասակարգս ընդ  
առաջնորդութեամբ դասատուի  
առաւելագոյն զօրասոյի սոյն այս  
մտաւ վարժ ներգործականութիւն  
աշակերտաց . զի լոկ թելադրելն  
զուսանելիս՝ որ հալիւ օգտէ առ  
նիւթական արտաբերութիւն  
բերանոյ, բնաւ իսկ անօգուտ  
ինչ է : 4 իւրաքանչիւր դասատու  
հետեւելով սահմանադրեալ  
կանոնաց՝ պարտաւոր դասնի  
անխափան դնել 'ի կշիռ  
դհասակ և դաստիճան սրամտութեան  
ուսանողոց, և այնպէս մեկնել  
նոցա զամենայն ինչ հասարակ և  
պարզացոյց ձևով . և առանձինն  
դարձուցեալ 'ի սակաւ յառաջագէմն  
ղմտադրութիւն իւր,

Ի՞նչ թողուլ ՚ի մտաց, սրտապնտել զջանասէրս քաջալերիչ խրատուք :  
 5 ուսուցիչք ՚ի ժամ դասատուութեան իւրեանց յամենայն դաս-  
 տունս, զգուշացիւն չմոռանալ պահպանել զիւրեանց պատիւ, քա-  
 ջաջան թեւակոխելով ըստ չափոյ կարեաց ներգործել ՚ի մատաղ հո-  
 թիս աշակերտաց, զանձինս գնելով նոցա յօրինակ բարեբարոյու-  
 թեան, ջանասիրութեան, անաչառ և բարենախանձ վճարման պար-  
 տուց, և ճիշդ սրահպանութեան թէ կանոնաց պատուոյ և թէ ան-  
 հրաժեշտ՝ յարմարաւայել պատշաճորութեանց հասարակ կենցաղա-  
 վարութեան : 6 ստուգապէս ճանաչելով զբարս և զընաւորութիւնս  
 աշակերտաց, հարկ ՚ի վերաց կայ նոցա գիտել ընտրել զպարտուպա-  
 շաճ ժամանակս և զեղանակս, զի խրատք և բարեխորհրդ խորհուրդք  
 նոցա ազգու և օգտակար լիցին սրտի մանկանց . պարտ է նոցա նա  
 ևս լինել երբեք ներողամիտ, մանաւանդ այնց՝ որ կամ թուլու-  
 թեամբ, կամ թերութեամբ ընդունակութեան, և կամ աղամայ  
 ատահակութեամբ անկարանան ՚ի կատարել զպարտս : Ի՞նչ ամենայն  
 անդուշտութիւն և Ի՞նչ ամենայն մեղանք արժանի համարին խիստ  
 համարապահանջութեան . նա՛ անաչառութիւն դաստիարակաց զօրէն  
 հայրականին պիտի լինել հեղաճամբոյր, չունելով զնշան ցասման  
 և զզաժանութեան . նմանապէս և ներողամտութիւնն՝ հիշեալ յա-  
 լէժաբար ՚ի վէժ՝ խոհեմութեան մի՛ նմանեցի փնասաբեր կողմնա-  
 սիրութեան կամ վարկպարպի վափկաբտութեան :

#### § 44 .

Թէ՛ որդեգիրք և թէ՛ թոշակատուք երբ ազատ գտանին ՚ի դա-  
 տաութենէ՝ անօրինեալ ժամուցն, ընդ առաջնորդութեամբ վե-  
 րակայուցաց անդադար պարապեցին ՚ի կրկնել և ՚ի պատրաստել զըն-  
 կալեալ դասն, ՚ի նոյն վարժեն զանձինս ևս և թարգմանելով՝ նո-  
 ղոք յօրինելով և ձայնարձակ ընթեռնելով զուս. ՚ի դաստիարակաց  
 ընտրեալ զհեղինակս, ուր և օգուտ քաղեն ՚ի բարեխորհուրդ խրա-  
 տուց վերակացուաց, յորոց և ՚ի դիպուածս դժուարութեան նոյն  
 հետայն առնուն զմեկնաբանութիւն և զօգնութիւն, որում կարօ-  
 տինն : Ի՞նչ անմասն ելանեն ՚ի խնամարկութենէ աստի և այլք՝ որ  
 զկէս թոշակին վճարեն, յորժամ գտանին ՚ի ճեմարանին :





Իսկ զերադանցյն յառաջդիմութեամբ, բայց յայդցանն վարձաւորին ներբողական վկայագրովք եւ ձրի մատենիւք՝ հաստատելովք կնքով ճեմարանիս եւ առորդաւորութեամբ հոգաբարձուի, կառավարչի եւ վերտանսչին : Վասն իւրականչիւր գտատան տնօրինին երկուս կամ երեք վարձատուութիւնք :

## § 50 .

Ի վախճանի հարցափորձութեանց նշանակի օր մի վասն հան-  
գիտի, առ որ հրաւիրին ծնողք և մերձաւորք ուսանողաց, պատ-  
ուարժան անձիկը զինուորական և քաղաքական կառավարութեան,  
և Կայսերական Մոսկովայ Համալսարանի, այլ և օտարականք։ Յետ  
բացառութեան վարժապետաց և աշակերտաց զՀառս և զշարադրու-  
թիւնս զայսմ հանգիտի բարեպատշաճս, ձայնարձակ հնչին ի լուր  
առնենցուն անուանք աշակերտաց, որք արժանացան բարձրանալոյ ի  
վերին դասատունս, բարձրին վկայադիրք ըստ արժանաւորութեան  
իւրաքանչիւրոց աւարտելոց զուսումնս, և վարձատրութիւնք յառա-  
ջադէմ զարգացելոց։

## § 51 .

Որդեգրաց և թողահատու աշակերտաց, որք ՚ի վախճան ամեալ Թադաֆ-  
նի ղկատարեալ ընթացս ուսմանց և փորձեալք օրինաւոր հարցա-վէյա-  
քննութեամբ, տուեալ լինի վկայաւիր, շոր ստորագրեն հոգաբար-գբոյ՝  
ձուռ, կառավարին և վերատեսուէն, հաստատելով զայնս կնքով  
ճեմարանս :

## § 52 .

Եթէ ոք յորդեգրաց և յայլոց սնահերոտաց ըստ պէտպէս պատ-Յառանգնաց չկարէ մնալ 'ի ճեմարանիս ցլախճան ընթացից ուսմանց, և Եթէ եղցոյ ըստ բաւականին զլաջողակ յաւանագիմունթիանս 'ի Եփեսոս գիտութիւնս և 'ի Լեզուս, տուեալ լինի նմա զուսմանէ և զբարոց պկայութիւն՝ ստորագրեալ 'ի կառավարէ և 'ի վերառեոսէ :

## § 53 .

Եթէ դք 'ի ձրլաւարժ աշակերտաց զչինչ ցուցցէ յառաջագի- Տարագրու  
մոտիւն յրթացս երկուց ամաց, կամ առ առաւելն՝ երկից, այն- թիւն անն

պիսին տարադրեալ լինի 'ի ճեմարանէս ոչ արժանացեալ և վկայա-  
գրի : Իսկ նորա, որ 'ի պատճառս հիւանդութեան կամ տկար խառ-  
նութեանց անմարթանան շարունակել զուսմունս, զկնի երկուց ամաց  
ստատնօր բնակութեան՝ արձակին 'ի ճեմարանէս հանդերձ վկայու-  
թեամբ զօրինաւոր պատճառէ անկատարութեան ուսմանցն :

## § 54 .

Ուսման համար ճեմարանն բաց յուսուֆական պիտոյից , ամենեւին կարեւորաց  
'ի պէտս դաստոտութեան զիտութեանց և լեզուաց, ունի ևս այժմ  
'ի պատրաստի 1 զմատենադարան, 2 զբաղում չափաբերական և զբնա-  
բանական գործիս . 3 զլոյսազուսմար բերս երկից տարբերաց բնուն :

Ծանօթութիւն . Ընծայք, զոր պարգևեալ են ճեմարանիս հա-  
րազատ որդիք Հիմնադրի Տեառն Յովակիմաց Լեզնադարեան, են սո-  
քին, մատենադարան, հանքային թանգարան, չափաբերական գոր-  
ծիք, աշխարհացոյցք, ազգի ազգի բազմաթիւ պիտանի մատենք,  
ևս և պէսպէս ուսուֆական պիտոյք, որոց զինք հաւասարին մեծի  
զուսմարի դրամոց : Յանցանել ժամանակաց հարկաւոր կարիք 'ի  
պէտս զիտութեանց և ուսանողաց հետ զհետէ յաւելցին 'ի զուսմար  
անդր կարգելոյ 'ի պէտս ճեմարանին, այլ և 'ի ձեռն նորոգ յօժարա-  
կամ ընծայաբերութեանց :

## § 55 .

Խնամակալութիւն մատենադարանին ըստ կամաց կառավարչին  
յանձնեալ լինի 'ի հոգաբարձուէ վերատեսչին կամ ուսման 'ի գլխա-  
ւոր դատտիրարակաց . իսկ այլ ամենայն ֆառցեալ գործիք աւանդին 'ի  
պահպանութիւն նոցա՝ որք պէտս ունին այնց 'ի դաստոտութեան .  
յուզակք և ստորագրութիւնք այնք ամենայնի պահչին 'ի մատենադա-  
րանի և 'ի կառավարութեան ճեմարանիս :


## § 56 .

Զգրեանս 'ի մատենադարանի եղեալս կարեն վարել 'ի պէտս մի-  
ութեանց այն ընտիր աշակերտք վերին դասաւանդ . իսկ ընտրողութիւն նո-  
րանց ցին, ըստ աւանձին կանոնաց առ այս նիւթ վերաբերելոց, կախի  
նշան . զետհականութենէ կարգավարին և վերատեսչին :



## § 57 .

Առ ճեմարանաւ կառուցեալ տպարանն եւրոպական և ասիա-Տիպարանն . կան լեզուաց , շինեցաւ յամի Տեառն 1829 արդեամբք և ծախիւք երկոցունց հարազատ որդւոց Հիմնադրին՝ պետական խորհրդակա-նայ Յովհաննու և Խաչատրոյ Յովակիմեան Լապարեանց :



## Գ Լ ՈՒՆ ԵՐՐՈՐԴ .

Բարոյական կառավարութիւն .

## § 58 .

Գլխաւոր առարկայք բարոյական կառավարութեան են նախ՝ Ազգայն-հակել, զի նոքա՝ որք ՚ի ճեմարանի կարգեալ են ՚ի վարժապետու-հայր-թիւն և ՚ի հոգատարութիւն , կատարեսցեն զքրիստոնէական պար-տաւորութիւնս իւրեանց , և այնու տայն ուսանողաց զօրինակ բա-նալի . երկրորդ՝ զի հանդամանք ուսմանց հեռի լիցին յամենայն վեա-տակար հետեւնաց . երրորդ՝ զի բարք որդեգրաց մի՛ լիցին իւրք մոլութեամբք խանգարեալ . չորրորդ՝ զի բարեկարգութիւնն լի-ցի բարեխորհուրդ և համաձայն կոչման աստիճանապատիւ անձանց և օգտի ուսանողաց :

## § 59

Բարոյական դաստիարակութիւնն զառաւել պիտանութիւն և Բարոյա-զորժանաւորութիւն բերէ մարդոյ քան մտաւոր կրթութիւնն նո-րա : Նպատակ բարոյական դաստիարակութեան ՚ի ճեմարանի՝ է կա-տարելապէս հաստատել զքրիստոնէութիւն երիտասարդաց յայն-նայն ինչ՝ որ բարին է և ազնիւ և զեղեյիկ . զմնէ ուղղել զնոսա առ-տոին : Եւ այս նպատակ մարթ է հասանել լուսաւորութեամբ մտաց , հաստատուն ճանաչմամբք , բարեկրթութիւն և արմատանալով սրտի յազնիւ զգացմունս , յոր մեծապէս նպաստէ և համոզուիմ սուրբ

սլարտաւորութեանց ուղղափառ կրօնի : Ընդհանրապէս դաստիարակք սլարտին ցուցանել զայնպիսի օրինակս, յորոց մատաղ սիրտք կարացեն քաղել իւրատ և օգուտ առ ամենայն ինչ՝ որ բարի իցէ և աղին . սլարտին ևս զիտել զժամանակն՝ թէ երբ յորդորմունք և հրահանգք կարեն ներդործել ՚ի միտս տկար և անկործ պատանեկաց, ևս և զեղանակն ազգու առնելոյ զայնս . վրան որոյ չէ՝ արժան սլատժել դամենայն թեթև և ստահակութիւն . նոքա սլարտական են զիջանիլ ՚ի տկարութիւնս և յակամայ սխալանս, բայց լինիլ խիստ և անողոր ՚ի յանցանս՝ զորոց համբակք կարէին կանխաւ գիտել և զգալ զանսլարտաւորութիւն և զջնաս :

§ 60 .

Պատահաւ ընդհանրապէս սլարտաւորութիւն կառավարչի և վերատեսչի յայսմ մասին կառավարութեան՝ համարի հակելն ՚ի վերայ բարուց դաստիարակացն, և ունիլ զանդուլ հոգատարութիւն ՚ի վերայ զարգացման համբակացն ՚ի բարեբարոյութեան : Առաւարիչ և վերատեսուչ սլարտին հոգալ ևս զայսմ ամենայն՝ որ ներդործէ յառողջութիւն, և ՚ի գիտութիւն երկտասարդաց . մի՛ թողցեն յաչաց ևս և զեղանակ կենաց, զվարս և զկենակցութիւն որդեգրաց ընդ իրեարս : ՚ի զիպուածս՝ յորս որդեգիրք յանցանեն ինչ անդուլութեամբ, նոքա ուղղեն զյանցուցեալն ըստ չափու վերահասութեանն :

§ 61 .

Իսկ ընդհանրապէս վերատեսուչն չթողու առանց սլարտուստաւոր ուղղորդութեան զաշակերտս ճեմարանին ՚ի հիւանդութեան նոցա, մանաւանդ զնոսա՝ որոց չեն ՚ի մայրաքաղաքիս մերձաւոր ազգականք կամ այլ հաւատարիմ անձինք առ ՚ի հոգատար լինիլ նոցա, և ցուցանէ զկարևոր գործակցութիւն իւր ՚ի բուժուած հիւանդութեան . իսկ եթէ հիւանդութիւն աշակերտին յերկարածդի յոյժ, կամ եթէ նախատեսանի վրանդ ինչ, յայնժամ տեղեակս առնէ զայնմանէ զբացակայ ծնողս կամ զայլ մերձաւոր ազգականս . վերատեսուչն խնամէ ևս, զի մանկունք՝ որք կրեն զտարափոխիկ խօթութիւն ինչ, մի՛ լիցին ընկալեալ ՚ի ճեմարան ցկատարեալ առողջութիւն նոցա :

§ 62 .

Ընդհանրապէս ՚ի վերակացուս ընտրին բարեկիրթ անձինք, որք ունին ՚ի Այս-

սերական Համալսարանէ զհրաման ՚ի լրումն այսր պարտաւորութեան, Բէնե եւ  
 և բայ յայնմանէ զվկայադիր վասն բարեյոյս բարոյականութեան և հարգութեան  
 վարուց իւրեանց, ստորագրեալ յերևելի անձանց : Արժանէ ջաշտեալ  
 նալ յընտրել զայնպիսիս որք կարկեցեն անսպթաք խօսել զաղղիւն  
 րէն կամ գերմաներէն և կամ յարևելեան ինչ լեզու : Արժա-  
 պեալք որ քաջ հմուտ են լեզուաց, յարող են կարգիլ ՚ի վերակա-  
 ցուս . և յանդրադարձ սակի : Հայեցեալ ՚ի թիւ ուսանողաց զօրհա-  
 նապաղ դասին երկու կամ երեք աւօրեայ վերակացուք :

§ 63 .

Վերակացուք պարտական են նախ՝ ունիլ զարթուն և զանդուլ Պարտաւոր-  
 հսկողութիւն ՚ի վերայ որդեգրաց . երկրորդ՝ յազատ ՚ի դասաւորու-  
 թեանց ժամանակի անդադար լինիլ ընդ նոսա, ունելոյ զնոյն սե-  
 ղան կերակրոյ և ըստ կարգի գիշերելոյ ՚ի մի և նոյն սենեկի . եր-  
 րորդ՝ կարգաւ երթալ ընդ նոսա ՚ի դասատունս . չորրորդ՝ զօրհա-  
 նապաղ հատու լինել այնմ՝ ամենայնի՝ զոր ուսանին նոքա ՚ի դասա-  
 տունս, հսկելով՝ զի աշակերտք ուշի ուշով պատրաստեսցեն զընկա-  
 լեալ դասս, և երկրորդեսցեն՝ զոր առեալ են ՚ի բերան . իսկ յա-  
 զատ ժամանակի պարտալիլ ընդ նոսա յընթերցանութիւն և ստի-  
 պել զնոսա ՚ի թարգմանութիւն կամ ՚ի ծաղկաբաղել՝ զորս ընթեր-  
 ցանս . հինգերորդ՝ վերահասու լինիլ որդեգրացն ևս և ՚ի խօսակ-  
 ցութեան նոցա ընդ միմեանս, նշանակելով և ուղղելով զսխալմունս՝  
 զոր յանցանեն նոքա ընդդէմ՝ կանոնաց լեզուի, պատշաճողութեան  
 և ճաշակի . վեցերորդ՝ յամենայն առաւօտու բանիւ յայտնել վե-  
 րատեսչին զհանգամանս ճեմարանի . իսկ զանսովոր անցից՝ եթէ հարկն  
 պահանջէ, իսկոյն տեղեակ առնել զկառավարին . եօթներորդ՝ իւ-  
 րաքանչիւր վերակացու պարտի ունիլ զօրագրութիւն, նշանակելով  
 յայնմ՝ թէ՛ զյանձնելոց նմա զորդեգրացն զյառաջագիմութիւն ՚ի  
 գիտութիւնս և ՚ի կենցաղավարութեան, զընաւորութիւն և զվկայու-  
 թիւնս ջանասիրութեան նոցա, և թէ՛ առ ի՞նչ առաւել ընդունակ  
 են նոքա, յոր յայնսն յաճախ անկանին, որ առանձին նպատից  
 կարօտ են, և այլն . յաւարտ իւրաքանչիւր ամսոց՝ օրագրութիւնքս  
 այսորիկ հասանեն ՚ի ձեռս վերատեսչի, և ՚ի սմանէ ՚ի ձեռս կառա-  
 վարչի և հոգաբարձուի . ութերորդ՝ հսկել զի որդեգիրքն մի՛ ըն-



Թերեցյին զայնպիսի մատենսս՝ որք չեն հաւանեալ 'ի վերատեսչէն, և միանգամայն զի մի արասցեն զայնպիսի ինչ՝ որ չէ՝ պատշաճ բաւելիլթ երիտասարդաց. իններորդ՝ նոքա՝ որք պատրաստեալ են զգաստ իւրեանց, ունին հրաման առաջի վերակացուացն պարապիլ յանմեղ խաղս. յամարացին և 'ի հանդիսաւոր աւուրս զբանուն նոքա յայգւոջ ճեմարանին, և երբեքն արտաքոյ քաղաքին 'ի միջոցս ժամուց նշանակելոյ 'ի վերատեսչէն :

## § 64 .

Ս. Երակացութեան վարիւն իւրեանց ընդ որդեգիրս՝ պարտին ջաւարիւն հաւանալ թէ՛ բարութեանց և թէ՛ խօսակցութեամբ տպաւորել 'ի սիրտս նոցա զէր առ զխտութիւնս և զյարգ առ կանոնս բարոյականութեան՝ առ 'ի ծնանիլ յորդեգիրս զաղնիւ բարենախանձութիւն, և այնու ձեռնտու լինիլ յառաջագիմութեան նոցա. վերակացութեան զխտութեամբ վերատեսչին բաժանեն վնոսս յատիճանս ըստ չափու ջանասիրութեան՝ զարգացման և կենցաղաւարութեան նոցա. աւագացն յանձնեն վերադիտել զկրքսն, և օգնել նոցա 'ի զբաղման նոցին. և ևս զերազանցելոյն զայլովք 'ի յառաջագիմութեան և 'ի բարեբարոյութեան՝ նշանակեն զառաջին տեղիս 'ի դաստոռնս, 'ի սենեակս և 'ի ճաշատան անդ :

## § 65

Ս. Երկուս զառաւարչին այցելութեանց՝ զոր նմա միշտ պարտ է առնել անկարծ և յաճախ, վերատեսուչ ճեմարանին պարտական է յայցելանել որդեգրաց և թոշակատուաց յամենայն աւուր 'ի բարում նուագս, նա՝ 'ի զիշերացին իսկ ժամանակի, և խնամել զի վերակացութեան պահեստն զ'ի ճեմարանին սահմանադրեալ կանոնս բարեկարգութեան :

## § 66 .

Ս. Երկուս զառաւարտեանս՝ զերեկոյեանս՝ զոր նախ քան զճաշ և զոր զինին, ընթերցուն աշակերտք կարգաւ կամ ըստ սահմանելոյ վերատեսչին, որ հսկեացէ՝ զի ամենեքին ուշագիլ լինին յունկնդրութիւն և աղօթեացն ջերմեռանդութեամբ. նոյն և ջան զիցէ 'ի միասին ընդ Սարգսպետի և ընդ քահանայից՝ որ ուսուցիչք են Ստ.

ուածաբանութեան և Աստուածային օրինաց, զի 'ի բարեպատեհ ժամն աղբեւոցն յաշակերտս զայս գլապուծն Աստուածաշուովեան, և մեկնեացն նոցա զճշմարիտ և զվսեմ նպատակ աղօթիցն • նմանապէս և զուսմունս 'ի դասատունս սկսանիցին և աւարտեացն մատուցմամբ աղօթից, զոր վարժապետք հրամայեն ըստ կարգի միւսմ յաշակերտաց ընթեռնուել բարձրաձայն :

§ 67 •

Յաւուրս կիւրակէից և այլոց հանդիսաւոր տօնից՝ որդեգիրք Ուսման և թոշակատուք ուղեկցութեամբ վերակայուեաց իւրեանց եկեալ յեկեղեցին, ջերմեռանդութեամբ լսեն զԱստուածային պատարադն : Ըստ պարտաւորութեան քրիստոնէական դասանուն՝ նորա ապաւնտարն յաւազ շաբաթու զատիկն և հաղորդին 'ի սուրբ Խորհրդոյն : Եւ իւրեք ժամ իւրեք ժամ :

§ 68 •

Յազատ աւուրս յուսուցիւթեան՝ բարեբարոյ և ջանաւոր ժամանակ որդեգիրք և թոշակատուք կարեն ըստ հրամանի վերատեսչին երթալ հէշտ առ ծնողս, առ ազգականս կամ առ նոսա՝ որոց են յանձնեալ, միայն թէ միշտ ուղեկից և ընկեր ունենլով զհաւատարիմ անձինս : Որդեգիրք և թոշակատուք արձակին յառաւօտու, և անդրէն յետո դասնան յեկեղեցի • ունին ևս հրաման զիշերեկոյ արտաբոյ ճեմարանին, եթէ իցեն շարունակ աւուրք հանդիսաւոր տօնից • իսկ նշանակեալքն 'ի ստահակութեան կամ 'ի ծուլութեան՝ չունին ամենևին իրաւունս առ պատիկ :

§ 69 •

Յասացեալ դիպուածս արձակման՝ իւրաքանչիւր որդեգիր և թոշակատու ընդունի 'ի վերատեսչին զտոմսակ ինչ, յորում նշանակուի կի երբ և ցոր ժամանակ արձակին նորա : Զիւրբնկալք որդեգրաց յաւազէն և թոշակատուաց նշանակեն զժամանակ յետո դասնալոյ նց 'ի տոմսակին յայնմիկ՝ զոր որդեգիրք և թոշակատուք ինքեանք հասուցանեն անդրէն 'ի ձեռս վերատեսչին :

§ 70 •

Առ 'ի քաջալերել զորդեգիրս և զթոշակատուս 'ի ջանասիրութիւն Մատենադարանի :

և 'ի բարեբարոյութիւն , և 'ի տեղեկացուցանել զճնորդ զգարգաց-  
մանէ նոցա , տուեալ լինի որդեգրաց և թոշակատուաց 'ի գնալն առ  
ընտանիս 'ի ժամանակա դադարման յուսումնաւորութեանց , առանձին  
վկայադիր ինչ զայնմանէ , ստորագրեալ 'ի վերատեսչէն . զոր որդե-  
գիրք և թոշակատուք անշուշտ պարտին յուսանել ճնորդաց կամ աղգա-  
կանաց իւրեանց , և զառ 'ի նոցանէ ստորագրեալն հասուցանել առ  
վերատեսուչն 'ի դառնալն իւրեանց 'ի ճեմարան :

## § 74 .

Յաղատ ժամանակս 'ի դասաւորութեանց' կառավարութիւն ճե-  
մարանին պարտական է կարգադրել այնպէս՝ զի որդեգիրք և աշա-  
կերտք թէ 'ի ճեմարանի և թէ 'ի տունս ճնորդայն' բայց 'ի հանդ-  
էսն իւրեանց , անյուսցեն զժամանակն 'ի շահաւէտ զբաղանս . ասն  
է՝ յերկրորդել զդասս և զայլ ուսումնական առարկայս , 'ի թարգ-  
մանութիւնս , 'ի շարագրութիւն , և յայլ սոցին նման յօդատկարն իւրծա-


## § 72 .

Ուսման և կենցաղավարութեան որդեգրոյն 'ի դաստառունս' 'ի  
սենեակս պարապմանց' և 'ի սեղանատունս հասուլ լինի վերատեսուչն  
առօրեայ վերակացուքն հանդերձ , որք սորին իսկ աղագաւ բնակին  
'ի մօտաւոր տունս ճեմարանին . վերատեսչին յանձնի ևս սահմանել  
զչափ պատժոց ստահակ մանկանց , որոց թոյլ տուեալ տեսակք են  
այսորիկ . յանդիմանել , ամօթով շառաղունել , զրկել 'ի բարձր տեղ-  
ւօջէ 'ի դաստառն , նշանակել , զանուն յանցաւորին 'ի սեւեռ տալ-  
տակի , և այլն :

## § 73 .

Երբ յիշատակալ խրատք և եղանակք ուղղելոյ ոչ ազդեն զգաս-  
տութեան մանկանց , կառավարութիւն ճեմարանին ըստ պարտաւոր  
տօրիւման՝ սահմանէ զչափաւոր խրատղանաձաղկ պատիժ ինչ . աշա-  
կերտք պատժին այսպէս առաջի վերատեսչին և յառանձին վայրի .  
և այս պատիժ տեղի ունի միայն 'ի ստորին դասատունս . իսկ 'ի վե-  
րինս՝ յանցուցեալ աշակերտն , որ անկանի ընդ այսպիսի պատժով ,  
արտաքսի 'ի ճեմարանէն :





## Գ Լ ՈՒ Խ Զ ՈՐ Ր ՈՐ Դ .

Առաւարտութիւն Տնտեսական և Կենցաղավարական (գործընկեր) :

### § 74 .

Առարկայք տնտեսական կառավարութեան են նախ՝ շարժական և անշարժ ինչք կամ ստացուածք ճեմարանին, և երկրորդ՝ եկամուտներն և ծախքը դրամոյց . այս ամենայն պարտի գտանիլ ընդ տնօրինութեամբ խորհրդարանին հաստատելոյ 'ի հոգաբարձուէ . իսկ մերձաւորագոյն հոգաւորութիւնն այոց իրաց կախի զվերատեսչին և զնորին օգնականաց 'ի տնտեսական մասին :

### § 75 .

Առաւարտին և վերատեսուչն անմիջապէս տնօրինեն զգործն Առաւարտն տնտեսութեան և Կենցաղավարութեան ճեմարանիս . առ 'ի կատարելութեան զճանապարհօրեայ զայսպիսի գործն կարգեալ է գործադիր ոմն, որ միանգամայն է ևս տնտես . իսկ համարակալութիւնն և հաշիւքն ընդ նին 'ի դիւանատան ճեմարանիս :

### § 76 .

Առաւարտին և վերատեսուչ անմիջապէս հասու լինին շինուած Պարտաւորոյն կառուցելոյ 'ի Հիմնադրէ 'ի կաղմութիւն ճեմարանիս հանդերձ ամենայն մասամբն և պարտիզիւ, նմանապէս և առանձին տանն որ վերաբերի 'ի ճեմարանն, ևսն այնոյիկ տանց որք առ յայն յաւելցին այսր նպատակի աղադաւ, նա և ամենայն իրաց առ այնս վերաբերելոյ :

### § 77 .

Խորհրդարանն ունի 'ի պահեստի 'ի դիւանատան անդ՝ զճշգրիտ ինչք ճեմարան և զմանրամասն ցուցակ ամենայն ընչից ճեմարանիս . նոյն խորհրդարանն յանձն արարեալ ձեռամբ վերատեսչին ընդ ստորագրութեամբ և հաստատեալ ցուցակօք՝ զայլեաց ուսուեմական իրս և զգրեանս :



ներկայութեան անդ խորհրդականաց : 'ի նոյն գանձարան մտանէն  
 և գումարք ընկալեալք 'ի լիաթոշակ և 'ի կիսաթոշակ աշակերտաց,  
 և յայնց որք գան լոկ 'ի լսել զգաստութիւնս . ևս և բնծայաբե-  
 րութիւնք յօգուտ ճեմարանիս : Կնիքն ճեմարանիս գտանի ընդ պահ-  
 պանութեամբ վերատեսչին և դրազրին 'ի դիւանատան անդ :

### § 80 .

Ընծայաբերութիւնք 'ի բարերարաց ընկալեալ լինին 'ի ճեմա-  
 րան յանուն խորհրդարանին , և 'ի գործ ածին համաձայն նշանակու-  
 թեան նուիրողացն հաւանութեամբ հոգաբարձուն : Ընծայ կարեն  
 լինել պէտքէս իրք . որպիսի են շինուածք յարմարք 'ի բնակու-  
 թիւն աստիճանաւորաց ճեմարանիս կամ 'ի տալ վարձու , ալդի աղ-  
 զի իրք , ուսումնական գործիքք , և առձեռնպատրաստ դրամք :

### § 81 .

Գումար դրամոց ընկալեալ 'ի պարէն թոշակատուն սեփհա-  
 կանի ճեմարանին , թէպէտ և աշակերտն այն ելցէ անտի յառաջ  
 քան զըրուսն ժամանակին , յոյս սակս դրամն վճարեալ է :

### § 82 .

Աղերսագիրք 'ի ծնողաց կամ յազգականաց վասն ընդունելոյ  
 'ի ճեմարան , մանաւանդ լիաթոշակ և կիսաթոշակ աշակերտաց ,  
 տուեալ լինին ըստ ստորագատ պատճենի՝ յանուն խորհրդարանին  
 գրեալ 'ի թուղթ հասարակ : Աւերատեսուչն յառաջագոյն ընկալեալ  
 զտարեկան կամ զկիսամեայ վճար վասն թոշակատուն , կիսաթոշա-  
 կին կամ երթեմեկողին , տայ աղերսարկուն զտպեալ մուրհակ վճար-  
 ման հանդերձ իւրով ստորագրութեամբ և հաստատութեամբ դրա-  
 զրին , և եղեալ զգումարն զայն 'ի խորհրդարանն՝ մուծանէ 'ի գիրն  
 (որ տուեալ է նմա 'ի խորհրդարանէն) զանուն և զմականուն թո-  
 շակատուն , կիսաթոշակին և այնորիկ՝ որ գայ միայն յուսանիլ , նշա-  
 նակելով յայնմ և զժամանակն մտանելոյ նոցա 'ի ճեմարան , զվի-  
 ճակ ծնողաց նոյն , զտիս աշակերտաց , զաստիճան յառաջադիմու-  
 թեան նոցա 'ի գիտութիւնս և 'ի լեզուս , զթիւ ընկալեալ գումա-  
 րին , և զժամանակն որոյ վասն դրամն այն վճարեալ է :





Ժամու. զինի ճաշուն ՚ի վեցերորդ Ժամու լինի նախընթերց .

Ծանօթութիւն . Որդեղիրք և թոշակատուք ճաշին և ընթերին ամենեքեան ՚ի միասին համասեղան ընդ առօրեայ վերակացուաց . կիսաթոշակք կերակրին ՚ի ճեմարանիս միայն ՚ի ճաշաԺամու ՚ի հասարակ սեղանի :

§ 87 .

Ա երատեսուհն և տնտեսն պարտին հանապաղ լինել առ սեղա-  
նով որդեգրաց և թոշակատուաց , և հոգածու լինել զօրակաութե-  
ն և զըրբանութենէ կերակրոյ . իսկ վասն անհոգութեանց իւրեանց  
համար ունին տալ ճշտիւ : Արարիք և կտաւիք սեղանատան լիցին  
միշտ մաքուրք : Դրդայք են արծաթեայք , անօթք՝ յախճապակեայք  
և արծճեայք . աղամանք և բաժակք՝ բլւրեղեայք : Անշուշտ պա-  
հանջի զի ամենայն անօթք խահանոցի ՚ի նշանակեալ Ժամանակս  
զտեսցին և պահեսցին միշտ մաքրութեամբ , նմանապէս և ամենայն  
երկաթեղէնք և փայտեղէնք այնմ պատշաճեալք :

§ 88 .

Ա սան միակերպութեան՝ կարգեալ լինի աշակերտաց ճեմարա-  
նիս միօրինակ զգեստ՝ որոշելով զձրիավարԺա և զթոշակատուս յեր-  
թեկեղ աշակերտաց : ՉրիավարԺ որդեղիրք՝ որք անանին արդե-  
տամբք ճեմարանիս՝ ստանան ձրի զհանգերձ, զօշեկս և զկտաւիս  
՚ի դպրոցես . վասն գնալոյ ՚ի դասատուսն նշանակին աշակերտաց մի-  
օրինակ վերազգեստք : Իսկ թոշակատուք պարտին ունիլ զզգեստ և  
զամենայն ինչ կարեոր ՚ի յարմար պահանջութիւն՝ ՚ի ճնողաց կամ  
յարգականաց իւրեանց . ամենայն աշակերտք պարտին ունիլ զզգեստս  
բարեձևս և մաքուրս , և պահել ճշտիւ զնշանակեալ միօրինակ ձև :

§ 89 .

Չ կտաւիս ձրիավարԺ որդեգրաց և թոշակատուաց , նոյնպէս Փոխ-  
ն և զոկանատան՝ հարկէ փոփոխել երկիցս , իսկ զսաւանս և զերեսս  
բարձից՝ միանգամ յեօթնեկի :

§ 90 .

Հիւանդացեալ որդեղիրք կամ թոշակատուք , որոց ծնողք և Դարձան

Հիւսիս-արեւմտեան օղակաձեւ գոտանիսն ՚ի բացակայի կամ ոչ կարեն անոնու զնոսա յիւրեանց մերձաւոր խնամածութիւն և ՚ի սեփական հոգատարութիւն, զարմանին ՚ի հիւանդանոցի արդեամբք ճեմարանիս :

## § 91 .

Որպէս ինչ որ ասուիք ի վերայ ի խնամութեան և հսկողութեան ՚ի ճեմարանին՝ կարգեալ լինին ՚ի կառավարչէն կամ ՚ի վերատեսչէն՝ զինուորք աղատեալք յարբունական ծառայութենէ . իսկ ֆապեալ սպասաւորք և ծառայք նկատմամբ հարկաւորութեանց՝ կարեն լինել վարձկանք : Սպասաւորք մի լիցին անհամեստ կամ անկարգ, այլ բարեբարոյք, արթունք ՚ի գործս իւրեանց, երազագործք, ընդունակք, քաղաքավարք և կարի զգոյշք ՚ի բանս և ՚ի գործս իւրեանց : Պարտաւորութիւն տնտեսին է վերահասու լինել՝ զի նորա լիւ կատարեսցնեն զպաշտամունս իւրեանց, և արդելու նոցա զայն ամենայն՝ որ կարէ փետել բարոյականութեան ուսանողաց :

## § 92 .

Խորհրդարանն ՚ի սկզբան իւրաքանչիւր ամի տայ զթուանշանեալ մատեան ինչ նախ՝ ՚ի Դիւանատունն ճեմարանիս առ ՚ի նշանակել ՚ի նմին զեկամուտս և զծախս ընդհանուր գումարից, և երկրորդ՝ Տնտեսին՝ նմանապէս ՚ի նշանակել զեկամուտս և զծախս դրամոց, պաշարաց և այլ իրաց՝ ստորագրութեամբ կառավարչին և կնքով ճեմարանին : Տնտեսն ստանայ զգում վասն կարեւոր պիտոյից ճեմարանին՝ ՚ի կառավարչէն կամ ՚ի խորհրդարանէն ՚ի ձեռն վերատեսչին ստորագրեալ ՚ի գիրն : Բաժինն ռոճկաց վարժապետաց և պաշտօնէից կամ այլ երեւելի ծախք՝ կատարին ՚ի ձեռն վերատեսչին ՚ի զիւսանատան անդ հանդերձ ձեռագրութեամբ ՚ի հաշուէգիրն : Ծախք արարեալ լինին ձեռամբ վերատեսչին և տնտեսին ըստ հաստատեալ դրութեանց . իսկ յառանձին զիւրուածս՝ ըստ լճոց հոգաբարձուին և խորհրդարանին : Ի վերայ այսր ամենայնի յառանձին իմն տեւրակի գտանի ճիշդ ցուցակ ամենայն ընչեց և ստացուածոց ճեմարանիս, զորս միանգամ ՚ի բարեպատեհ ժամու յիւրաքանչիւր ամի՝ պարտ է վաւերագործել վկայութեամբ :



## § 93 .

Մին յանդամոց խորհրդարանին, կառավարին և վերատեսուչն Սկսելով  
 յառաջին առուր իւրաքանչիւր ամսոյ սարտին վկայել ըստ կնքանը  
 շան հաշուէմատեննի՝ զորդարութենէ եկամտից և ծախուց և միւս ևս որոշոց .  
 յեալ ձեռնպատրաստ դրամոց :

## § 94 .

Յի կատարած իւրաքանչիւր ամսոյ՝ առաջադրեալ լինին հոգա-  
 բարձուին Յի վերատեսչին և Յի գրադրէն Յի ձեռն կառավարչին, հա-  
 մառօտ յայտարարութիւնք զօրպիտութենէ իրաց, զեկամտից և զծա-  
 խուց . իսկ Յի վախճանի իւրաքանչիւր ամի ծանուցանեն նմա ման-  
 րամասն զամենայն իմեքէ ըստ ամենայն առարկայից :

## § 95 .

Հաշիւք Յի նորոգել ինչ ինչ մասունս ճեմարանիս լինին ըստ  
 յանձնարարութեան հոգաբարձուին և խորհրդարանին՝ ձեռամբ ճար-  
 տարապետին, զոյգ ընդ վերատեսչին, ուրանօր պարտ է օրինակ առ-  
 նուլ զընդհանուր գինն իրաց . այն հաշիւք քննին յընդհանուր ժո-  
 ղովն խորհրդարանին, որոյ հաստատութեամբ արարեալ լինին զա-  
 նազան կարեւոր նորոգութիւնք ընդ կառավարութեամբ անտեսին և  
 ճարտարապետին, և ընդ վերահասութեամբ միւր յանդամոց խոր-  
 հրդարանին և վերատեսչին . կառավարին և վերատեսուչն վկայեն  
 զայնմ ամենայնէ, որ ինչ միանգամ արարեալ է :

## § 96 .

Յի պատրաստեն զհանդերձս և զկերակուրս, զուտուֆանիս պիւ-  
 տոյս և զայլ իրս, որք լինելոյ են մեծաւ քանակութեամբ, պարտ է  
 ունել զպաշարապետս, ընդ որս դաշինս արասցեն օրինական ձեռով  
 ըստ վճռոյ հոգաբարձուին և խորհրդարանին : Վերատեսուչն Յի  
 սկզբան իւրաքանչիւր ամսոյ՝ առաջի առնէ խորհրդարանին զհամար  
 բոլոր պիւտոյից ճեմարանիս, և դրամոց՝ յայնս ծախելոց :

## § 97 .

Լիակատար թոշակատուք, որք՝ բաց Յի կելոյ Յի ճեմարանին, թոշակ-  
 անանին և կրթին անդանօր, վասն այսր և վասն այլոց պիտոյից դա-  
 տատանց, որպիսի են զբեանք, թուղթ, զրիւք, թանաք և մատիտք,  
 ևս :

ամի ամի հատուցանեն զ750 ռուպլիս : Կիսաթոշակք՝ որք առնուն  
 աստ զնոյն ուսմունսս, կերակրին միայն ՚ի ժամ ճաշու և ստանան  
 զսկիտոյս դատտան, վճարեն զ450 ռուպլի : Իսկ այն աշակերտք որք  
 ուսանին միայն՝ վճարեն զ250 ռուպլի : Որովհետև արևելեան ճե-  
 մարանս այս է կենդրոն ՚ի մէջ այլ դատմական դպրոցաց՝ ազգիւ  
 հայոց, սահմանի, զի թոշակատու և այլ աշակերտք հայոց դա-  
 ւանութեան հատուցեն հարիւր ռուպլի պակաս քան զ՚ի վերոյ նշա-  
 նակեալ տարեկան վարձն, սին է. լիակատար թոշակատուք հատու-  
 ցեն 650 ռուպլի. կիսաթոշակքն 350 ռուպլի. և երթևեկ աշակերտքն  
 450 ռուպլի թղթադրամ : Բայ ՚ի վերակրոց և յուսմանց՝ թոշակա-  
 տուք ունին զամենայն ուսումնական նպատակս ՚ի ճեմարանիս՝ զմատե-  
 նադարան, զհաւաքութիւն հանրային քարանց, զերկնագունտս և զերկ-  
 րագունտս, զաշխարհացոյց զպատկերս և զայլս : Բոլոր այս վճարք  
 պարտին լինել թաղաւորական թուղթ դրամովք կանխավճար վասն  
 կիսամեայ ժամանակի, առանց յետս պահանջելոյ ինչ, թէպէտ և  
 թոշակատուն ելցէ ՚ի ճեմարանէն յառաջ քան զընթացն նշանա-  
 կեալ ժամանակն : Թոշակատուք և այլ աշակերտք պարտին ունիլ  
 զզգեստ և զամենայն կարևոր պիտոյս վասն պահպանութեան իւրեանց՝  
 ՚ի ճնորդաց կամ յազգականաց : Ըռանձին կանոնք ընդունելոյ զաշա-  
 կերտս ստորագրեալ են մանրամասն ՚ի վերոյ ՚ի համարս § 43, 44,  
 45, 46, 81, 82, 83, 84, 88 և յայլս ըստ կարգի :



## ՅԼՐԼԴԻՐՈՒԹԻՒՆ ԵՌԱՋԻՆ .

Ուսումնական Կարգաւորութիւն Հայկական Ճեմարանին Տեւրդ  
Լազարեանց յօտարազգի ուսմունս և ՚ի լեզուս .

### Եւաջին պատրաստական դասատուն .

1 .

Օայսմ դասատան մանկունք ուսանիցին զհամառօտ հրահանգս քրիստոնէական վարդապետութեան և զըրբազան պատմութիւն : Հրահանգս  
քրիստոնէական  
վարդապետութեան  
և զըրբազան պատմութեան

2 .

Հիմաւոր տեղեկութիւն Ապսերական լեզունն ուսաց պատմութեանն .  
բաստ առնէ առ այլ զիտութիւնս , իբր զի յայնմ հիմեալ կայ դիւ-  
րագոյն ուսումն այլազգի լեզուաց . ընտելացուցեալ զուսանողս հո-  
լովմանց , լծորդութեանց և այլ փոփոխութեանց մասանց բանի ,  
պարտ է կրթել զնոսս ՚ի քերականական լուծման , սովալելով զի ինք-  
նին գտանիցեն զօրինակս կանոնաց , և զատանիցեն զարմատական  
բառս յաճանցիւոյ , նոյնպէս և մարդեւ զնոսս թեւադրութեանն :

3 .

Եւաջերոք ուսցին զընթերցանութիւն և զգրութիւն Լատին Եւրոպէի  
լեզուի , սերտեսցին ՚ի յիշողութեան զբառս և զգործածական խօսեցանս .  
սակցութիւնս . և վարժեսցին ՚ի հոլովմունս և ՚ի լծորդութիւնս  
լատին բառից : Իսկ ՚ի մասին լեզուաց Գերմանացւոյ և Գաղղիոց-  
ւոց՝ յայսմ դասատան բաւեսցէ ընթերցանութիւնն և գրութիւնն :

4 .

Ի թուաբանութեան բաւական է այսմ դասատան բարեք զի թուաբա-  
նական գործեսին թուաբանական հաշուարարութիւնս , և ճիշդ ընտե-  
րանալ նոյին համարողութեանցն :

5 .

Ուսումն աշխարհագրութեան և պատմութեան յայսմ դասա- Եւաջերոք  
8



պատահանք տան սահմանափակի յաշխարհագրական, ՚ի պատմական և ՚ի ժամանակահատվածի նական տղիւնակս : Բաւականագոյն տպագրելոյ ՚ի մօի զանուանս, զյորջորջմունս և զամս՝ մանթէ որոշել զերևելի երկիրս, զանձինս և զթուականս պատմելով զարժանիսն յիշատակաց :

6 .

Այլևս Յուսմունս պատրաստական դասատան առաջի դիցի և վայելչագրութիւնս, որ պատրաստեսցէ ՚ի նկարել և ՚ի գծագրել :

Յայսմ պատրաստական դասատան վասն ընթացից ուսմանց նշանակին երկու ամբ :

## Երկրորդ Ղապատուն .

7 .

Ընդհանրաբ՝ որ մտանեն յայս դասատուն, պարտին տեղեակ լինել քրիստոնէական հրահանգի և սրբազան պատմութեան, որք աւանդին ՚ի պատրաստական դասատան . նոքա պարտին ուսանիլ զընդարձակ հրահանգն քրիստոնէական, ընթեռնուել զԱւետարան, և յիւրաքանչիւր նուազի դասառութեան առնուել ՚ի բերան զքանի մի տունս յայնմանէ :

8 .

Երբ մանկունք ընտելացեալ են մասանց բանի, և ընդունակ են որոշելոյ զարմատական բառս յաճանցականաց, կարեն ինքնին կազմել զբոլոր նախադասութիւնս . առաջի արարեալ զկանոնս համաձայնութեան, պարտ է պարապելոյցանել վնոսս յորոշել զտեսակ բառից, ստիպել յընթեռնուել զընտիր ընտիր հատաճս յերևելի հնդկական Ռուսաց, և զերեալ ՚ի վերայ թղթոյ զգերազանց միտս և զանայնաճաճ՝ տալ ուսանիլ ՚ի բերան, որով սկիզբն արասցէ կրթիլ մատաղ ճաշակ համբալաց, և ծնցի ՚ի նոսս ընտրողութիւն : Զի՛ պարտ երբէք ՚ի բաց թողուլ զարտասանութիւնն ոտանաւորաց և արձակ շարադրութեանց, որոյ օգուտն և հարկաւորութիւնն ՚ի կեանս՝ իւրաքանչիւր ումեք են ակներև յայտնի . յայսմ դասատան շաշակերտք պարտին կատարելապէս վարժիլ յուղղագրութեան . և

աստ լիցի ուսումն քերականութեան Սլավոնաց, որոյ տեղեկութիւն ամենեւին հարկաւոր է 'ի բարւոք գիտութիւն լեզուի Ռուսաց, ուստի առաջադրի ընթեանումը զգիրս ժողովողի և դառակա Սաղովմինի կամ զգիրս Յովբայ :

## 9 .

Քերականութիւնն Լատինաց հանապազորդի հանդերձ թարգմանութեամբ և բացատրութեամբ ընտիր տեղեաց 'ի շահաւէտ ժողովածու գրոյ . որոյ ուսանին զգերմանացւոյ կամ զգաղիացւոյ լեզուս պարտ է պարապիլ 'ի քերականութիւն , յուղադրութիւն և 'ի լուծումն մասանց բանի . չէ՛ հարկ թողուլ և զվարթութիւնն յայլազգի խօսակցութիւնս . վասն բարւոք մարդելոյ՝ ուսուցիչք լեզուաց 'ի դաստան իւրեանց սահմանեցեն զժամանակ ինչ առ 'ի խօսիլ այլադի լեզուս զիւրաց ուսումնականաց կամ բարոյականաց . բայց յայմանէ մանկունք պարտին այլազգի լեզուք ուսանիլ 'ի բերան յառակ՝ ոտանաւոր և արձակ բանիւ . խոհեմութեան ուսուցչաց անկանի առնուլ յամենայնի զկարեւոր չափս 'ի հասասարել զաշակերտս աստիճանի իւրաքանչիւր ուրուք յառաջադիմութեան . յայսմ դաստան պարտ է հասուցանել զուսանողս յայն աստիճան՝ զի կարոսցեն հասու լինել դիւրին պարբերութեանց 'ի լեզուս Լատինաց, զերմանացւոյ կամ գաղղիացւոյ, և զի ունիցին զբարւոք արտասանուի :

## 10 .

Թութեանութիւնն պարտ է հասուցանել յաւարտ , ոչ թութեանութեան և զհամեմատութիւն , զյառաջատութիւն և զնշանակս թութոյ :

## 11 .

Յայս ստորին դաստառն պատմութեան և աշխարհագրութեան Սղեմնէ մտանն համբալք բարւոք 'ի միտ առեալ զաղիւստիս . ուստի պարտ պատմութեան լինի նոցա ստորագրել աստ զ'ի բերան ուսեալ զանուանս . ուսուցիչն աշխարհագրութեան պարապեացի ընդ աշակերտաց իւրոց 'ի համառօտ յընդհանուր աշխարհագրութեան , մանաւանդ Ռուսաստանի՝ ցուցանելով զտեղիս 'ի վերայ աշխարհացոյցի . ուսուցիչն պատմութեան դարձուցէ զուշադրութիւն ուսանողաց 'ի վերայ երեւելի անցից և մեծաշուք արանց, որովք հռչակեցան այլ և այլ աշխարհք 'ի

հին և ՚ի նոր ժամանակս . մանաւանդ հանդէպ նկարեացէ զսիրտ-  
դործութիւնս և զանձինս ՚ի պատմութենէ Ռուսոյ՝ առ ՚ի կանխա-  
յուշանելոյ զգործս նոցին և առ ՚ի ծնանելոյ ՚ի նոսա զաղնիւ զգա-  
յուշն հաւատարմութեամբ ծառայելոյ ԹԱԳԱՒՈՐԻՆ :

42 .

Նշանակեալ  
էն .

Ուսեալքն ըստ բաւականին զրել՝ կարեն կատարելագործել յայ-  
տըմ արհեստի, և ապա դիւրին ինն նկարագրել մատիտաւ զձեռն ըստ  
կանոնաց նորին . յայտմ երկրորդ դասատան վասն ընթացից ուս-  
մանց նշանակին նոյնպէս երկու ամբ :

### Երրորդ Դասատուն .

43 .

Նշանակեալ  
էն .

Ուսուցիչն հրահանգաց քրիստոնէութեան յայտմ դասատուն հա-  
նապաղորդէ զուսումն քրիստոնէական, ընդ որ և զբացատրութիւն  
Աստուածային պատարադի և զգործածական աղօթից :

44 .

Նշանակեալ  
էն .

Երկրորդեալ զկանոնս քերականութեան, և քննեալ զկար ու-  
սանդոցայ ՚ի Այսլերական լեզուի՝ պարտ է սկիզբն առնել ճարտասա-  
նութեան . ուստի արժան է ըստ կանոնաց որոշել զճառս երևելի  
հոետորայ՝ յուշանելով զկապակցութիւն նոցին, զկարգ և զտեղիս՝  
որք կարեն լինել օրինակ պարզ վիպասանութեան, և զօրեղ ապտ-  
ցուցութեանց : Առ ՚ի սկիզբն առնել շարագրելոյ՝ մտնի թէ նախ  
առաջարկել զի հետևեցին նմանել, յօրինեացեն զբջջաբանութիւնս,  
ճառացեն զպրակս ՚ի պատմութենէ, նկարագրեացեն ինչ ինչ ՚ի  
բնութենէ, և ապա՝ զի շարագրեացեն . տալով նոցա զիտել՝ եթէ  
շարագրութիւնն բաղկանայ ոչ ՚ի կուտակութենէ բառից, այլ ՚ի  
պարտաւարտաճ կապակցութենէ և ՚ի բարեւոք կարգաւորութենէ  
ըստ կանոնի և ճիշդ արտագրեալ դատողութեանց : Ի մէջ բերեալ  
զկանոնս Տաղաւախութեան չէ պարտ թողուլ զճիշդ ընտրութիւն  
բառից, զվերլուծական և զայլաբանական նշանակութիւնս նոցին .  
վասն զի զկատարեալ տեղեկութենէ սոցին կախի և կատարելութիւն



մտածութեանց : Յետ որոյ ցուցցին կազմութիւնք պարբերութեանց  
և արժանաւորութիւնք ոճոյ :

45 .

